

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

ՈՂԲ ԵԴԵՍԻՈՅ

ԲԱՆ ԲԱՐԱՌՆԱԿԱՆ, ՏԱԴԻԻ ՉԱՓԵԱԼ ՀՈՄԵՐԱԿԱՆ, ԽՕՍԵԱԼ ԲԱՆԻԻ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ,
ՎԱՍՆ ԵԴԵՍԻԱՅ ՄԵԾԻ ԱՌՄԱՆ Ի ԹՈՒՎԿԱՆԻ ՀԻՆԳՀԱՐԻԻՐԻ ԵՒ ԻՆՆՍՈՒՆ ԸՆԴ ԵՐԵՔԻ,
ՔՍԱՆ ԵՒ ԵՐԵՔ ԴԵԿՏԵՍԲԵՐԻ, ԵՐՐՈՐԴ ԺԱՄՈՒԷ, ՅՕՐ ՇԱԲԱԹԻ:

1

Ողբացէ՛ք, եկեղեցիք,
հարսունք վերին առագաստի,
Քորք եւ եղբարք իմ սիրելիք,
որք յընդհանուր կողմ աշխարհի.
Քաղաք եւ գեւոք առհասարակ,
ազգ եւ ազինք, որ էք յերկրի,
Հաւատացեալք Քրիստոսի,
երկրպագուք նորին խաչի:
Նախ առաջին ձեզ բարբառիմ՝
արփիափայլ եւ հրաշալի,
Չորեքկերպիցն նմանեալ
յերկրի աթոռք երկնաւորի,
Որ էք բղիսումն աստուածային
ի յաղբերէն Ադենայի,
Յորս առ ի ձէնջ քառավտակ,
յորդահոսան գետք հողովին՝
Արբուցանել գտիեգերս
աւետաբեր բղիմամբ բանի.
Առ որս խօսիմ աղերսալի,
դուք լսեցէք լալոյս ձայնի:

2

Երուսաղէ՛մ քաղաք մեծի
թագաւորին երկնաւորի,
Ուստի Օրէնք եւ Մարգարէք
աղբերաբար բղիսեալ յերկրի,
Յորմէ Որդին Հօր միածին
լոյս ծագեցաւ աննառելի
Եւ ինձ գրեաց երանութիւն
յառաջագոյն, քան զամենի.
Քանզի նախկի հաւատացի,
զՈրդի ընդ Հօր դաւանեցի,
Որով թէ ոչ յանդգնէի,
զիս վեհագոյն քեզ ասէի:
Ի քեզ սպանին զՏէրն ի փայտի,
ես ի հեռուստ երկրպագի.

Թեպետ եւ այժմ ի մի հոգի
երկրպագեմք նորին խաչի:
Բայց դու լսեա, ո՛վ սիրելի,
տարագրելոյս աղաղակի,
Լե՛ր մխիթար ցաւակցելի
եւ ցո՛յց ինձ դեղ բեկեալ սրտի:
Եւ դու, Հոռ՛մ, մայր քաղաքաց,
գերապայծառ եւ պատուելի,
Մեծին աթոռդ Պետրոսի
առաքելոց գլխաւորի.
Եկեղեցիդ անշարժելի,
ի Կեփայեան շինեալ վիմի,
Դրաց դժոխոց անյաղթելի
եւ կնիք երկնիցն բացողի,
Որթ վայելուչ բազմաստեղեան
եւ հաստարմատ տունկ Պօղոսի,
Առոգելով արեամբ նորին,
որպէս գորախտն, որ յԱդենի,
Մասին հասեալդ Դուկայի,
աստուածային մատենագրի,
Ահա առ քեզ բանս խօսիմ,
վիճակ ՚ւ աթոռս Թաղէի:
Լո՛ւր ի հեռուստ իմոյս ճայնի,
լե՛ր ողբակից ինձ յայս վայրի,
Լա՛ց ընդ լացողս, որպէս ասի
ըստ գրեցելումն առ քեզ բանի:
Ձե՛ռն մատո վաղվաղակի
ինձ՝ կապելոյս ի տան բանտի,
Ա՛ռ զվրէժս աններելի
ի թշնամւոյն զիս գերողի:
Առ քեզ են բանք իմ փարելի,
ո՛վ դու քաղաք յոյժ պանծալի,
Չոր Կոստանդեայ թագաւորի
շինեալ ի սկիզբն Ասիայի:
Երկրորդ եղեալ Երուսաղէմ
եւ նոր Հոռմ գարմանալի,
Սիրեցելոյն աշակերտի
աթոռ գոլով փոխադրելի:
Ժողովարան սուրբ վկայից,
տուն եւ տեղի մաքրագունի,
Գահոյք հզօր մեծ արքայի,
յերկրի նման երկնաւորի:
Լո՛ւր ինձ եւ դու խոնարհաբար,
ո՛ւնկն մատո լալոյս ճայնի,
Չի սեփական ես քո էի

մայրաքաղաք քում վիճակի:
Ի քէն շինեալ յիս տաճարի՝
անուանակիր քոյդ խորանի,
Հանգոյն վերինն Սիմոնի,
անհամեմատ երկրաւորի:
Բայց այժմ թողեր զիս ամայի,
իբրեւ զբու յաւերակի,
Կամ որպէս մարդ անօգնական
եւ ի մեռեալս անյիշելի,
Չոր պաղատին զարթուցանել
զգօրութիւնդ անվանելի,
Հատուցանել բազմապատիկ
զվրէժ՝ ի ծոց իմոյ նեղչի:
Ահա գոչեմ առ դրունս քո,
մայրաքաղաքդ Եգիպտոսի,
Աղեքսանդրիա ցանկալի,
անուանակիր քում շինողի,
Որ ես աթոռ դու Մարկոսի՝
մեզ աւետեաց քարոզողի,
Որ եւ դրախտին աստուածայնոյ
տունկ բանաւոր ի քեզ տնկի:
Արմաւենիք ծաղկեալ ի տան,
հոյք արդարոց Տեառն ընծայի,
Եւ որպէս մայրք Լիբանանու
են միանձունք քոյդ նահանգի,
Հրեշտակերամբ եւ խաչակիրք
եւ անմարմնոց նմանք յերկրի:
Հիմն արմատ ուղղափառաց,
տարամերժող հերձուածողաց
Էին գումարք հայրապետաց,
որ առ ի քոյդ նախագահի,
Թէպէտ եւ չեն այժմ ի միջի,
այլ լոկ երազ են գիշերի,
Քանզի եղեր եւ դու այրի,
կարծեմ նման ինձ ողբալի:
Երբեմն էաք մեք ըղձալի,
բայց այժմ եղաք յոյժ եղկելի.
Որով հայցեմ, ո՛վ բաղձալի,
ողբակցելով ինձ յայս վայրի,
Չի հաւասար հանգունակի
յանօրինաց եղաք գերի:
Արդ, մխիթար այսմ աղէտի
մեզ երկոցունց լինիցի՝
Մաքուր մաղթանս աղերսալի
մատուցանել Տեառն արարչի,

Չի բարկութիւնն, որ ըստ մեղաց,
ի քաղցրութիւն փոխարկեսցի,
Ի տեսանել ի մեզ՝ բարի,
՛ւ ի թշնամիս՝ լինել չարի,
Թէ աստանօր հաճոյասցի
եւ եթէ անդ հատուցանի:
Բանիւ դատմամբ ընդ քեզ կագիմ,
ո՛վ Անտիոք քոյր սիրելի,
Առաքելոց տուն եւ տեղի
յԱւետարանն Մատթէի.
Յորում անունն սքանչելի
նախ առաջին ի քեզ դնի,
Որ քրիստոնեայն վերակոչի
երկրպագուացս Քրիստոսի,
Իմ մերձաւոր եւ անձկալի՝
յուրախութեան ժամանակի:
Ընդէ՞ր չհասեր վաղվադակի
ինձ ի թիկունս օգնականի,
Այլ թոյլ ետուր վասն խեթի
մատնիլ ի ձեռս անօրինի:
Արդ, լո՛ւր իմոյս դառն ձայնի
եւ լեր կցորդ այրման սրտի,
Լա՛ց ընդ լալիս յամենայնի,
վասն իմ իջո ջուր վտակի:

3

Արդ, ի Ստորին կողմ աշխարհի
գոր խօսեցաքս՝ շատասցի.
Բայց բանս մեր փոփոխեսցի,
յեթս արեւու վերադարձցի
Առ Մեծն Հայք՝ Տուն Թորգոմի,
ագգ եւ ծնունդն Յաբելի,
Անդ, ուր այթոռ Պարթեւագանց՝
թագաւորացն Արշակունի,
Յորում էի ի սահմանի,
յառաջագոյն որպէս ասի:
Ի յԱբգարէ թագաւորէ
նոցունց շինեալ ես լինէի,
Նաեւ նմին գոլ վիճակի
առաքելոյն Թադէոսի,
Յորմէ բղխեալ ծաղիկ բարի
եւ շառաւիղ գաւազանի
Գրիգորիոս Պարթեւագին՝
Լուսաւորիչն այնմ աշխարհի,
Խոտովանողն Քրիստոսի
եւ մարտիրոսն կենդանի:

Եւ արդ, առ քե՛զ բանիւ բերիմ,
Հայաստանեայցդ եկեղեցի,
Յորում կաթեաց շողն երկնային,
զպաղն հայեաց զհիւսիսի.
Լոյսն անստուեր ծաւալեցաւ,
եւ ճառագայթն անճառելի
Սաստիկ եհար ուռաւքն ոսկի,
ձայնք հնչեցին յստորինս երկրի:
Անդ հրեշտակացն բազմութիւնք
յերկնից հեղան ըստ հիւղէի,
Եւ մարդկային ազգ երկրածին
վերասլացան յերթերն երկնի:
Որ անապատն էիր վայրի,
եղեր նման փթթեալ ծաղկի
Եւ կուսական արեամբ ներկեալ՝
պայծառացար ի գոյն վարդի:
Որդիս ծնար յաւազանի,
որ քան զաւազ շատ է ծովի,
Դիեցուցեր կաթն ի ստենէ,
սնուցեր արեամբն կենդանի,
Դաստիարակ մանկանց բարի
տալով զՕրէնսն Մովսէսի,
Եւ կերակուր կատարելոց՝
զԱւետարանն Զրիստոսի:
Յայնժամ էիր երանելի,
այսու բնաւից դու ցանկալի՝
Երկնաւորաց եւ երկրայնոց
եւ կենդանեաց բոլոր սեռի:
Բայց հարցանեմ, ո՛վ բաղձալի,
բանիս խնդրեմ պատասխանի.
Այժմ ո՞ւր է թագն քո զարդի
եւ կամ պսակն հրաշալի,
Ո՞ւր զարդարանքն դշխոյի՝
հարսին որդւոյ թագաւորի,
Ո՞ւր պատմունճան հարսնարանի
կամ ոսկեհուռ վերջաւորի:
Է՞ր չէ փեսայն ի խորանի,
կամ փեսաւերքն՝ ի տաճարի:
Ո՞ւր են մանկունքն առագաստի,
զի՞ ոչ հնչեն զերզսն Դաւթի:
Չիա՞րդ լռեալ ոչ հարկանեն
զփողն հնչող Տարսուացի:
Ո՞ւր պարարակն եզնամոլի,
զիա՞րդ ի քեզ ոչ զենանի,
Կամ մատռուակքն բաժակին

զի՛ր նչ բաշխեն զանուշ գինին:
Ո՛ր բարեկամքն զուարճակից
ընդ գիւտ որդւոյն անառակի
Կամ տարածեալ գիրկ հայրենի՝
առ ի համբոյր մեղաւորի:
Ո՛ր քաղցրաձայնն երաժշտի
կամ գեղգեղումն եղանակի,
Ո՛ր ընթերցողքն են Սուրբ Տառի,
կամ վարդապետքն՝ ի հանդիսի,
Ո՛ր է աթոռ հայրապետի,
կամ քահանայք՝ ի սուրբ բեմբի,
Ո՛ր սարկաւազք են ի սպասի,
կամ պաշտօնեայք՝ պատարագի:
Ո՛ր են խնկոցն ի քեզ բուրմունք՝
աներեւոյթ՝ ւ երեւելի
Կամ ժողովոցն գումարումն՝
յաւուր տօնիցն տէրունի:
Ո՛ր են գահոյք թագաւորի
Վաղարշապատ քո քաղաքի,
Կամ նախարարքն ո՛ր արքայի
Այրարատեանդ գաւառի:
Ո՛ր են իշխանքն, որ առաջի,
կամ՝ զինակիրքն, որ են վերջի,
Ո՛ր զօրականքն յասպարիզի,
կամ լեզէոնքն՝ ի ճակատի:
Ո՛ր մեծամեծքն ի բազմոցի,
կամ ո՛ր սեղանն ամենայի,
Ո՛ր են ազատքն ի տանարի,
կամ տեառնորդիքն ի ծաղկոցի:
Ահա բարձաւ այս վաղագոյն,
յոյժ հեռացաւ, ոչ երեւի.
Անուրջք՝ ւ երագք էին յայտնի,
արդ ծածկեցան ի զարթմնի:
Այլ փոխանակ այսր ամենի
յոյժ հակառակն տեսանի,
Քանզի նստիս որբ եւ այրի,
տխուր դիմօք՝ զերդ ի սգի:
Վասն այն զքեզ իսկ կոչեցից՝
լինել սգակից ինձ յայս վայրի,
Քանզի նման քոյն ցուցանի
իմոյս նորոգ եղեալ չարի:
Արդ, ուսուցես, ո՛վ սիրելի,
եւ զիմս ողբալ ըստ արժանի,
Իբրու հմուտ լալեաց բանի
եւ քաջ տեղեակ այրման սրտի:

Բայց եւ զքեզ յայս հրաւիրեմ,
արեւելեան քաղաքդ Անի
Կցորդ իմոյս լինել ձայնի
եւ սփոփիչ տարակուսի:
Քանզի եւ դու երբեմն էիր
վայելչական հարսն ի քօղի,
Մերձաւորաց յոյժ ցանկալի,
հեռաւորաց փափագելի:
Շինեալ եղեր տուն արքունի
յընտրեալ նահանգդ Շարայի
Թագաւորաց Բագրատունի,
որ ի ցեղէն Իսրայէլի,
Յազգէ սերեալ մեծին Դաւթի՝
աստուածահօր մարգարէի,
Գեղեցկանուն զարմանալի,
որ երրակի տառիւ բերի
ՅԵրրորդութեանն խորհրդի,
որ միշտ ի քէն երկրպագի:
Յորում էիր ժամանակի
բերկրեալ ուրախ եւ ցնձալի,
Որպէս այգի ողկուզալի
կամ ձիթենի պտղով իլի:
Մանկունք քո զուարթալի
նման նորոգ բուրաստանի,
Դստերք քո պանունալի
յերգ 'ւ ի քնար միշտ ի խաղի,
Իսկ թագաւոր քո պանծալի
նստեալ յաթոռ թագն ի գլխի,
Եւ զօրականքն աստի 'ւ անտի
կալով ի սպաս իւր հրամանի:
Նաեւ որդիքն Սիոնի
նման դասուցն հրեղինի,
Յարմարապէս յօրինուածով
կաթողիկէ յեկեղեցի,
Այն, որ հանգէտ եւ հաւասար
վերնակառոյցն խորանի:
Հայրապետք, եպիսկոպոսք
եւ քահանայք 'ւ այլք ըստ կարգի,
Իւրաքանչիւր յիւրում դասի
պատշաճաւոր յայն տանարի,
Չոր թէ ասել հարկ լինիցի,
է դժուարին 'ւ յերկարելի,
Եւ անօգուտ յայժմուս բերի,
յորոց է ոչ մի ի միջի:
Քանզի անցին ըստ երագի

որպէս ծաղիկ ամառայնի,
Չյորդութիւն յորդ վտակի
գարնանաբեր հեղեղատի,
Կամ գուռուցեալ գպղպջակի,
որ ընդ լինելն պատառի:
Սուրն անողորմ անօրինի,
որ մեր արեանս է ի սովի,
Որ չէ յագեալ եւ ոչ յագի
մինչեւ ի գալ կատարածի,
Նոյն նա եհաս ուրեմն ի քեզ,
որպէս յիս՝ յայս ժամանակի,
Հնձեաց զօրայն յանդաստանի,
կանաչաւոր ի հասակի,
Չայգին խլեաց արմատաքի,
մերկեաց յոստոցն զծիրենի:
Եհեղ գարիւն սրբոց յերկրի,
հոսեաց նման ջրոց գետի,
Արար դիակ անթուելի,
անթաղ մեռեալ գէշ գագանի,
Քահանայիցն Քրիստոսի
արեամբ ներկեաց զեկեղեցի:
Սարկաւագաց պաշտօնէից
մարմինք անկեալ մէջ փողոցի
Եւ այլ բազմաց, որ ոչ թուի
եւ է ասելն անկարելի,
Որ քեզ հասին յայնմ վայրի
բոլոր ամէն մասունք չարի
Եւ արարին զքեզ գերի,
քան զՍաղիմ՝ ՚ւ այլ աւելի:
Վասն այսորիկ, ո՛վ անձկալի,
որ ես ներհուն այսր ամենի,
Ի քոյն յայնժամ իհիստ աղէտի
ծանիր եւ զիմս ողորմելի
Եւ որպէս փորձ տարակուսի՝
լեր տրտմակից ինձ յայս վայրի,
Քանզի նման յոյժ տեսանի
իմս քոյոյն հասեալ չարի:
Արդ, ժողովե՛ա զդստերս քո,
վասն իմ ի լաց նիստ ՚ւ ի սգի,
Գոչեա ձայնիւ կականելի,
չարժեա ի յորք զամէն հոգի,
Չի զովացումն այրման սրտի
ոչ է այլ ինչ, քան այս լինի:

4

Բայց աղէտս իմ ցաւելի

ո՛չ փոքրագոյն դեղով բուժի
 Եւ ո՛չ միով տեղեաւ փակի
 կամ մասնաւոր մարդկամբ սփոփի:
 Այլ կարեկից այսր աղէտի
 պարտ է կոչել աղերսալի
 Չորերթագեան կողմ աշխարհի,
 ուր են հանուր մարդկան որդի.
 Չարեւելս՝ արեւմտիք,
 եւ գհարաւ՝ ընդ հիւսիսի,
 Առ որ գոչեմ ձայնիւ գուժի,
 լալով խօսիմ զայս ասելի,
 Թէ՛ ազգ ամէն բանաւորի,
 ժողովեցէ՛ք ի մին վայրի,
 Արք եւ կանա՛յք, հարք եւ որդի՛ք,
 հարսն եւ փեսա՛յն յառագաստի,
 Տղա՛յք, մանկո՛ւնք ՚ւ երիտասա՛րդք,
 ծե՛րք եւ ամէն չափ հասակի,
 Թագաւո՛րք՝ հանդերձ գօրօք,
 պետք եւ իշխա՛նք, տես՛րք աշխարհի,
 Հայրապե՛տք, տեսո՛ւչք հօտի,
 կարգեալ իշխա՛նք յեկեղեցի,
 Քահանա՛յք՝ սարկաւազօք
 եւ խո՛ւմբ հանուրց կղերիկոսի,
 Վանակա՛նք՝ յանապատի,
 որք անմարմին էք ի մարմնի,
 Հո՛յք իմաստուն սուրբ կուսանաց,
 որ ցեղակից էք սրորէից,
 Դա՛սք հանճարեղ վարդապետաց
 եւ քաղցրաձայն պաշտօնէից,
 Չորս ողբակից ինձ հրաւիրեմ,
 յորդուց իմոց կոտորածի:
 Լացէ՛ք, լացէ՛ք բարձր ի ձայնի,
 զիս ողբացէ՛ք կողկողալի,
 Ես՝ Եդեսիա, Ուռհա քաղաք,
 որդեկորոյս, որք եւ այրի,
 Կանչեմ առ ձեզ ձայն կանացի,
 կականալիր ՚ւ ողորմելի:
 Չքօղս ի գլխոյս մերկանալով,
 զիմ պատառեմ ծածկոյթ զարդի,
 Փետտեմ զվարս իմ ցանկալի,
 իզեմ զհերս անխնայելի,
 Քարամբք ծեծեմ զկուրծս սրտի,
 բախեմ զերեսս իմ ապտակի,
 Նստիմ ի սուգ ի տան մթի,
 որպէս օրէն է սգաւորի,

Եւ փոխանակ որդան զգեստի՝
սեաւ զգենում գոյն տխրելի,
Հեղում արտօսք անչափելի,
յորդ եւ առատ նման գետի:
Քանզի առա՛կ եղէ յերկրի,
տիեզերաց նախատելի,
Եւ անցաւորք ճանապարհի
վա՛յ ի վերայ ասեն վայի:
Չի ոչ ծածուկ էի տեղի,
կամ ի յանկեան ինչ թաքստի,
Այլ ի գետիցն, որ յԱդենի
էի բազմեալ ես ի միջի՝
Ի յԵփրատայ եւ Տիգրիսի,
որ Միջագետք անուանէի:
Արդ, նախ՝ ասեմ զայն, որ կրեցի
ի ձեռանէ Տեառն զբարի,
Ապա՝ զչարիսն, որ պատահեաց
ինձ ըստ մեղաց յանկարծակի:
Դուք հեզարար աստ մատուցէք
զականջս ձեր իմոյս բանի,
Չոր ծանուցից փոքր ի շատէ
ձեզ զգանգատս իմ ըստ կարգի:
Ես մայր էի բազմորդութեան,
անթիւ ծնայ դուստր եւ որդի
Չորս մայրաբար դիեցուցի
ի ստեանց իմոց կաթն արբուցի,
Գեղեցկատիպ յօրինեցի,
վայելչապէս զարդարեցի:
Քանզի երկիր պարարտ էի,
աղբիւր կաթին յորդ բոխէի,
Աւետաբեր նման վայրի,
՛ւ այլ վերագոյն ես թուէի:
Ջուր կենդանի յինէն բոխէր,
զուարթածաղիկ բոյս յօրինէր,
Գետոց նման վտակ հոսէր,
զբուրաստանս արբուցանէր:
Ծովն ի միջի իմ ծածանէր,
քաղցրիկ օղովն ծիծաղէր
Չաղտեղութիւն տղմի մաքրէր
եւ զհրապարակսն զարդարէր,
Բազմագունի տունկ յօրինէր,
որպէս զդրախտն, որ յԵդեմ էր,
Սաղարթաբեր ծառովք ծաղկէր,
առատագոյն պտղաբերէր,
Տերեւախիտ հեզիկ շարժէր,

հոտ անմահից յիւրմէ բուրեր,
Նարդոս, քրքում ինձ ընձիւղեր,
վարդ մանուշակ վերաբերեր,
Առաւօտուն ցօղն իջաներ,
ոսկենման ճաճանչ փայլեր.
Անհամեմատ յերկրի նա էր
պտղովք ամէն, գոր ընծայեր:
Չոր եւ ասել ոք ոչ կարեր,
մի առ միոյ թէ եւ կամեր,
Չի գանդաստանս իմ թէ գործեր
ոք երկրագործ եւ սերմաներ,
Հարիւրաւոր, վաթսնաւոր
կամ երեսուն պտղաբերեր,
Տոհմականօք, գոր ընծայեր,
բազմաբեղուն բարիս բերեր,
Յշտեմարանս ժողովեր
’ւ այնու գորդիսն իմ կերակրեր:
Բայց թէ գդիրս իմ յանկաւոր
ոք պատմեսցէ պատշանաւոր,
Կարծեմ թէ չէ նմանաւոր
այս՝ քաղաքաց, որ երկրաւոր:
Լայն եւ արձակ նստեալ յաթոռ,
որպէս ի կառս՝ թագաւոր
Կամ թագուհի՝ յոյժ գեղաւոր,
ոսկետտուն եւ ճամկաւոր,
Փողփողկով ի վերջաւոր,
պայծառագգեստ եւ պճնաւոր:
Շուրջանակի պարառաւոր
պարիսպ ածեալ լայն եւ ամուր,
Աշտարակօք բարձր ահաւոր,
իմաստապէս ’ւ արուեստաւոր,
Որպէս գլուխն դիպաւոր
մակաւասար անձին բոլոր:
Հաստահեղոյս հիմամբ ’ւ ի խոր
մահարձանօք պսակաւոր,
Տունք եւ տանարք զարմանաւոր
շինեալ ի գիրկս իմ շքեղաւոր:
Յարկ եւ փողոց, տեղ վաճառաց
գոյր յօրինեալ հանճարաւոր,
Բայց զխորանսն լուսաւոր,
թէ որպիսիք յոյժ փառաւոր,
Չայն չէ ասել ինձ հնարաւոր
կամ հողեղէն մարդ երկրաւոր,
Չի երկնայնոցն էր նմանաւոր,
վերնագունին հանգիտաւոր,

Չարմանագան եւ աննման,
գոր չէ տեսեալ որ բանաւոր:
Այդպէս կայի յոյժ խնդաւոր,
գերդ մայր՝ որդւովք բերկրեալ յորդոր,
Դուստր եւ որդիք իմ բիւրաւոր
զինեւ կային շուրջ պարաւոր,
Փթթեալ վարդից նման թերթից
կամ գեղունակ ճղաց խնձոր:
Որպէս գայգի մեծ տաշտաւոր
կամ բարունակ ողկուզաւոր,
Իբր ի յանկեան տունկ սորէկ որթ,
տեղւոջ պարարտ եւ զօրաւոր:
Եւթանասունք խորհրդաւոր
աւանք պատեալ զինեւ բոլոր,
Եւ ես բազմեալ գերդ թագաւոր
կայի ի մէջ հանդիսաւոր:

5

Արդ այս բարիքն, որ պատմեցան,
փոքր ի շատէ բան ճառեցան,
Որ ի յանցեալ դարուն սկսան
եւ այժմ առին փոյթ զվախճան,
Յորում էի յուրախական
մասին հասեալ երանական,
Ի տեսողաց՝ ներբողական
եւ յողաց՝ զարմանական:
Բայց ի հասեալ ներկայական
ժամանակիս, որ դիպեցան,
Բարիքն ամէն սպառեցան,
եւ քաղցրութիւնքն դառնացան,
Եւ երանի տալոյն փոխան,
զիս եղկելի այժմիկ կարդան:
Արդ թշնամեաց դասքն խնդան,
եւ սիրելիք ձայնիւ ողբան,
Գլուխ ի վերայ իմ ամբառնան,
որք ի ներքոյ ոտիցս եղան:
Ազգն, որ ծառայքն էին բնական,
ծնունդք՝ ու որդիք աղախնական,
Ի Սառայէ փախստական
Հազար՝ ու որդին հալածական,
Չի մի՛ ժառանգ հայրական
Աբրահամու գոլ սեփական,
Այժմ յազատիս վերայ յարեան,
հանել զտիկինս կամեցան,
Անժառանգել զիս խորհեցան
եւ հալածել յորդւոց մարդկան:

Եւ թէ զիա՞րդ այս գործեցան
կամ յի՞նչ իրաց պատահեցան,
Ժամ է ասել դէմ յանդիման,
պատմել բանիւ ողբերգական:
Թէպէտ եւ յոյժ անհնարական
է զբովանդակն ասել մեզ բան,
Սակայն փոքունք մեզ բաւական
յայտնել զաղէտն, որ դիպեցան:
Քանզի այգւոյն զիս պահապան
եղ՝ որ ստեղծ զիս ի սկզբան,
Եւ աւանդեաց ինձ պատուիրան,
ուստի եւ կեանք անմահական:
Յայնժամ որդիքն մայրական,
մարտեան ընդ իս պատրողական,
Տեսեալ ի փառս անգուգական՝
չար նախանձու բորբոքեցան.
Յերկիր հանին անիծական,
փուշ եւ տատասկ յորմէ բուսան,
Մեղօք լցին անյագական՝
սիրոյ մերժեալ յարարչական:
Մինչեւ Հովիւ արիական
խնդրեաց զհօտն իւր բանական,
Բարձեալ ի յուսն աստուածական՝
հանեալ ի վեր, ուստի անկան:
Սակայն դարձեալ թշուառացայ,
յերկնից յերկիր կործանեցայ.
Ի բարձրութեանցն վայր անկայ,
խոնարհեցայ եւ ափշեցայ:
Չպատուիրանն մոռացայ
եւ յօրինացն հեռացայ:
Բազմատեսակ մեղօք լցայ
եւ չար գործովք աղտեղացայ:
Սողոմոնեան խորան եղայ
եւ Կեղարու անուանեցայ,
Քանզի իսեթիւ յիս հայեցաւ
լոյսն արեւուն, եւ սեւացայ:
Արդ, վայ ասեմ ինձ ըստ Դաւթայ,
քանզի երկար պանդխտացայ
Ի սկզբանէ, յորմէ սկսայ
լինել ազգի ցեղին Հռոմայ:
Յայնժամ յարեան ի յիմ վերայ,
ազգ եւ ծնունդն Հազարայ.
Յառաջ գորդիսն իմ, գոր ծնայ,
կոտորեցին ի յանխնայ,
Ապա՝ զաւանսն պարագայ,

որ շուրջ կային զինեւ ի ճահ,
Աւերեցին եւ քանդեցին,
հողաբլուր թողին զնոսա:
Եւ այս ի յամս էր ոչ սակաւ,
այլ քառասուն կամ գերակայ,
Յորս ի յուժոյ պակասեցայ
եւ զօրութեամբ տկարացայ:
Հէնք ի հինից գային վերայ.
ասպատակաւ եւ գերեցայ,
Պէտպէս ցաւօք հիւանդացայ,
յախտս մահու ծիրեալ անկայ:
Եւ դեղ ցաւոց իմ ոչ գտայ
եւ ոչ բժիշկ, որ գրեղն տայ:
Ի դժոխոց դրունս հասայ,
նաեւ յատակն մերձեցայ:

6

Արդ, զայս տեսեալ բռնաւորին
եւ կամակոր չար վիշապին,
Սողայր եւ գայր նման օձին
եւ նենգաւոր թիւնաւորին՝
Առ ի խայթել գարշապարին,
եւ հարկանել գաղտնի նետին,
Այն որ դողեալ եւ թաքուցեալ,
ծածկեալ ունէր զնենգն ի սրտին.
Եւ դարանեալ գայլն ի մայրին,
ինձն թաքչէր յանապատին,
Որում անուն իւր կոչէին
Չանգի՝ չարեաց գործօնէին:
Յարձակեցաւ յանկարծօրէն
եւ յեղակարծ ժամանակին,
Յորժամ տեսին եւ ծանուցին,
որ զօրականքն իմ աստ չէին:
Յայնժամ պատեալ շուրջանակի,
զիս պաշարեաց զօրօք նորին՝
Արաքացւոց մոխրականին,
որ ըստ անուանն իսկ ոչ թուին՝
Ելիմացիք եւ Քետացիք,
անթիւ բազում լեզէոնին:
Շամբք եւ հօտիւք պատեալ կային,
անել ՚ւ անմուտ զիս առնէին,
Միշտ հանապազ մարտնչէին,
օր ըստ օրէ զիս նեղէին:
Ձեւ զանազան փոփոխէին,
նոքօք ի մարտ վառեալ գային
Չրահաւորք, մկնդաւորք,

ճօշիւք ծածկեալ բոլոր անձին,
Մունաւորք, աղեղնաւորք,
նետիւք հարեալ խոցոտէին,
Պատնէշ կանգնեալ մեքենայիւք,
ռմբաքարս հոսէին:
Ծեծէին, հարկանէին,
անհնարին տագնապէին.
Բայց այսոքիւք ոչ կարացին
յաղթել քաջացն, որ յիս կային:
Մինչեւ ի յայլ հնար մտեալ
այն խորամանկ նենգաւորին.
Որպէս խլուրդն փորէին,
ներքոյ հիմանն ամրականին,
Մինս եւ նեցուկ հաստատէին
աշտարակացն եւ պարսպին,
Առ ի յայրել պատրաստէին,
որպէս օրէն է այս նոցին:
Յայնժամ բարբառ արձակէին
առ ժողովուրդս քաղաքին.
Մի' յամառել ընդդէմ նմին,
զի մի' մահու մեռանիցին,
Այլ տալ յօժար եւ կամովին,
զի բարութեանց պատահեսցին:
Եւ զայս լուեալ՝ ժողովէին
քաջն եւ արիքն ի միասին:
Պնդէին, հաստատէին,
ուխտ եւ դաշինս դնէին՝
Ո՛չ յերկուանալ ի հանդիսին,
ո՛չ լքանել պատերազմին.
Ո՛չ հաւանել բանից նոցին,
եւ ո՛չ բանալ կամաւ նմին,
Այլ բարիոր վարկանէին,
զի անդանօր մեռանիցին,
Քան թէ ստել մեծի ուխտին
եւ վայելել յառօրէին:
Մակաբայեանց նմանէին
եւ Վարդանանց պատերազմին,
Միշտ առ միմեանս ճայնէին,
աղաղակաւ զայս ասէին.
Մի' երկիցուք զանգիտելով,
եղբա՛րք, ի սրոյ մահկանացուին
Եւ ընդ քաջացն արիութիւն
մի' խառնեսցուք զերկիւղ վատին.
Անուն բարեաց ժառանգեսցուք,
որ ընթանայ յազգ երկրածին:

Անդրդուելի կազմել զհոգին
վասն յուսոյ երկնաւորին.
Մեզ օրինակ բարեաց աստէն
ունիմք բազումս ի հանդիսին՝
Չվկայիցն բազմութիւն,
որ քան զթիւ գերազանցին,
Որք յաղթեցին չար իշխանին՝
երեւելոյն եւ անյայտին:
Ի մարդկանէ այժմ գովին
եւ յԱստուծոյ փառաւորին,
Ի հանդերձեալսն պսակին,
արեգական նման ծագին:
Փոքր ինչ է վիշտն, գոր կրեցին,
անբաւ՝ բարիքն, որ պարգեւին,
Չարչարեցան ի վայրկենին,
բայց ժառանգեն զյաւիտենին:
Նմանեսցուք սուրբ վկայիցն,
որք Քառասունք վերաձայնին,
Որք միաբան ընթանային,
յաղթող գտան յասպարիզին:
Մի՛ նմանել թոյլ եւ վատին,
գոր բաղանիքն կորուսին,
Այլ՝ պսակացն տեսողին՝
իմաստախոհ բաղնապանին.
Հանդիսադիր մերոյ մարտին
չէ՛ ի ցեղէ հողեղինին,
Եւ ոչ եղաք զոյս մեր ի մարդ՝
մահկանացու եւ երկրային,
Այլ գօրագլուխն հրեշտակաց,
որ է յաթոռ քերորէին.
Նա յարդարիչ պատերազմին
եւ պարգեւիչ յաղթանակին:
Առ որ ունիմք անքակտելի
գհաւատ եւ զոյս առ սիրելին,
Յորմէ կրկին մեզ պարգեւին,
թագ եւ պսակ բրաբիոնին:
Չի թէ յաղթեմք՝ պսակիմք,
՚ւ անուն բարեաց մեզ քարոզին,
Եւ թէ մարմնով յաղթահարիմք,
լուսով հոգիք մեր փայլեսցին:
Ընդ արդարոցն դասեսցուք
յարքայութեան Հօրն վերին,
Յանգրաւական հարսնարանին,
գոր խոստացեալէ յաղթողին:
Չի թէ աստուստ տարագրեսցուք,

որ հայրենեաց կոչի գետին,
 Որ է պայծառ յերեսելիս
 եւ վայելուչ աչաց բերին,
 Այլ փոխանակ անցաւորին
 ժառանգեսցուք զանանց բարին՝
 Ի փափկութեան լուսոյ դրախտին,
 յորմէ ամկաւ մարդն առաջին,
 Յանմահութեան անախտ վայրին,
 ի սեփական մեր հայրենին:
 Եւ փոխանակ այս քաղաքի,
 որ է շինուած սա մարդկային,
 Ունիմք շինուած մեք յԱստուծոյ,
 անձեռագործ եւ երկնային,
 Որոյ շինող նարտարապետ
 աջ արարչին է անեղին:
 Այն, որ կանգնեաց կամար գերկին,
 կացոյց ի նմա զդասս վերին,
 Այն, որ գերկիրս հաստատեաց,
 եւ զորս ի սմա՝ մինչ ոչ գոյին:
 Արդ, մեք ի նա հաստատեցաք
 զոյս եւ զհաւատ, սէրն ընդ նոսին,
 Չի թէ կամի եւ կեցուցէ,
 փառք եւ պատիւ տացուք նմին:
 Ապա թէ ոչ զայս ախորժէ,
 այլ տայ ի ձեռս անօրինին,
 Յայսմ առաւել մեք գոհացուք,
 զի տնօրինէ մեզ զբարին,
 Որպէս զհայր գթած խրատէ
 վասն մեղաց մեր, որ լինին:
 Բայց եւ դարձեալ մխիթարէ,
 որպէս բնութիւն է այս նորին,
 Եւ զտղայս Բաբելոնի
 մատնէ զօրաց քրիստոնէին,
 Կալնուլ զոտից մանկանց նոցին
 եւ հարկանել պինդ զքարին:
 Որ քակեցէք այժմ, ասացին,
 եւ մինչ ի հիմն հասուցին.
 Զանդեսցին, աւերեսցին,
 եւ ի հիմանց տապալեսցին,
 Չերդ վաղափուլն աշտարակին,
 զոր շինեցին դարձեալ նոքին,
 Եւ կամ դժոխքն անդնդային,
 զոր աւերեաց աջ հզօրին:
 Արդ, նոքա զայս եւ այսպիսիս
 միշտ առ միմեանս գոչէին,

Իբր ատամունքն վարագին,
բանիւ զիրեարս սրէին:
Քաջալերէր հայրն զորդին.
որդիքն ի մարտ պատրաստէին:
Անդ ո՛չ իշխան էր պատուական,
եւ ո՛չ կրտսեր՝ ի տեղ վերջին,
Այլ միաբան եւ հաւասար,
միախորհուրդ ամենեքին:
Միշտ հանապազ քարոզէին
հրապարակաւ եւ առտնին:
Եպիսկոպոսք եւ քահանայք՝
իւրաքանչիւր դաս իւր ցեղին.
Անդրդուելի կալ ի մարտին,
արհաբար՝ ընդդէմ չարին:
Մի՛ երկնչիլ ի սրոյ նորին,
որ սպանանէ՛ միայն զմարմին,
Այլ յայնմանէ՛ զարհուրեացուք,
որ գեհենին տայ զերկոսին,
Միայն զնա՛ մեք սիրեացուք,
որ պսակէ զիւր սիրելին.
Համբերութեամբ ստասցուք զոգին,
վարձս ընկալցուք զանպատմելին:

7

Արդ, իբրեւ զայս բարբառէին
եւ քաջալեր միմեանց տային.
Ահա հասցեն մեզ յօգնութիւն,
քաջ եւ արի զօրքն, ասէին,
Եւ ի թիկունս հայէին,
ընդ ճանապարհսն դիտէին,
Ի գիշերի եւ ի տուրնջեան,
միշտ գալստեան ակն ունէին:
Թէպէտ եւ ոչ ժամանեցին,
որոց նոքայն սպասէին,
Քանզի յամեալ յապաղեցին,
որ յընդհանուր կողմանս էին,
Գալ յօգնութիւն իմոյ կոմսին,
երկրպագուք սրբոյ խաչին:
Վասն այսորիկ յոյժ փութային
կողմանք դասուց հակառակին,
Չի գործ ծածուկ մեքենային
փոյթ եւ արագ վճարեացին:
Քանզի գիտէր չարն ի յինքեան,
ոչ դիմամարտ լինել նոցին,
Այլ թէ կանխեալ ժամանէին,
յանգերծ տեղիսն փախչէին:

Բայց զի մեղացն բազմութիւն,
 որ միշտ առ իս յաճախէին,
 Չայն որ բարեաց մասունքն էին,
 զամենեսեան խափանէին,
 Իսկ զչարիս մերձեցուցին,
 մինչեւ ի գլուխ իսկ հասուցին:
 Չոր աստանօր սիրտ իմ ճմլի
 'ւ երիկամունքս զալարին,
 Յաւ հարկանի որովայնիս,
 միտք եւ հոգիս իմ այլայլին,
 Մինչդեռ յիշեմ զօրն ահագին
 եւ զառաւօտն մթագին,
 Չանլոյս ցորեկն խաւարին,
 որ լուսացաւ նսեմ խորին:
 Յորժամ զհուրն Սողոմիւն,
 ներքուստ ի վեր բորբոքեցին,
 Ոչ ի վերուստ անձրեւածին,
 այլ ի ստորինս փորուածին,
 Յայնժամ պարիսպ ամրականին
 վերուստ ի վայր կործանէին
 Եւ ի հիմանց տապալէին,
 մուտ թշնամեացն գործէին:
 Այլ քաջարիքն ո՛չ կասէին
 'ւ ո՛չ ի փախուստ իսկ դառնային,
 Բայց առ միմեանս ճայն տային,
 քաջալերեալ յորդորէին:
 Արիաբար հաստատէին
 զինուք յանկաճն պարսպին,
 Դիմեալ ի մահ խրախուսէին,
 ո՛չ զանգիտել ի սրոյ նոցին,
 Այլ որպէս հօտ հովուապետին
 յաղն երկնային դռոհ տային:
 Թահանայք եփուտաւորք
 սուսերաւորք լինէին,
 Եպիսկոպոսքն պատուականք,
 ի ձեռս առեալ զնշան խաչին.
 և Հապա, եղբա՛րրք սիրելիք,
 մի՛ զարհուրիք, և առճայնէին.
 և Չմա՛հ ընտրեցէք դուք քաջութեամբ,
 որ քան զկեանս է գովելին:
 Ահա հասեալ է մարտադիրն,
 եւ յաղթանակն է ի ձեռին,
 Եւ պսակէ զքաջ եւ արին,
 որ յայսմ աւուր մեռանիցին:
 Իսկ չարութեան արբանեկին

գդասն վառէր զօրականին,
Հրատարակէր ի լուր նոցին,
արիանայ յայնմ մարտին,
Յորմէ պարգեւք խոստանային
եւ մեծութիւն յոյժ երկրային,
Նաեւ պատիժ պատուհասին
սպառնայր ամել թոյլ եւ վատին:
Յայնժամ զինեալք լինէին
գունդքն զօրաց անաստուածին,
Գազանաբար յարձակէին՝
մերձեալ ի մուտն պարսպին:
Իսկ զօրականքն անյաղթելի,
որ անդանօր հասեալ կային,
Ընդդիմամարտ գոլով նոցին՝
զհակառակսն վանէին.
Եւ որպէս փայտ ինչ անտառի
յանօրինաց կոտորէին,
Մինչ զի գահի հարկանէին
եւ յետս ընդդէմ նահանջէին:
Բայց երանի էր իմս անձին
թէ բանք իմ աստ դադարէին,
Եւ ոչ յառաջ այլ խաղային՝
նմել զսիրտս յտղին:
Այլ չէ օգուտ յայսցանէ ինձ
բանիւ լռել զորս ի կարգին,
Իբրու արդեամբք ընդ իս անցին
չարիքս այս մեծ՝ ւ անհնարին:
Քանզի յորժամ ոչ կարացին,
յաղթել քաջացն, որ անդ կային,
Յայնժամ վիրագն անդնդային
գոչեաց ռամիկ զօրականին.
և Ի սուր՝ ւ յաւար՝ ւ ի գերութիւն,և
ասաց,և լինել զամենեսին:
Եւ զայն լուեալ Արաբացին,
անթիւ զօրաց բարբարոսին,
Իբրեւ զեռանդն պտուտկէին՝
շրջան առեալ շուրջ քաղաքին.
Չեռմամբ յեռեալ տագնապէին,
մի առ միով արշաւէին,
Փողս եւ գոսերս գոչէին,
իբրեւ յամպոցն որոտային,
Չայնս ահագինս հնչէին,
մինչ զի գերկիր դորդէին,
Որ վատասիրտքն վախէին,
քաջք եւ արիք խիզախէին,

Ոմանք ի մահն դիմէին,
՝ւ այլք ի յահէն մեռանէին:
Այլ զի նուազ ժողովէին,
՝ւ ոչ բաւականս պարսպին,
Եւ այն դատեալ վաստակէին,
ի յանդադար պատերազմին:
Քանզի տեսեալ ժուժկայեցին,
իբր ամսօրեայ գոլով մարտին
Վասն այնորիկ տեղ ինչ մասին
ի պահպանաց թափուր գտին:
Յորում ելեալ բարձրանային
սակաւք ոմանք յաշտարակին,
Իսկ ժողովուրդք քաղաքին
զայն ինչ տեսեալ զարհուրէին,
Ձայնս գուժի արկանէին
եւ ի փախուստն դառնային:
Եւ ապա զինչ կամ որպիսի
անդ տեսութիւն էր դժուարին:
Քանզի խուժան անօրինին,
իբր զփախուստն զայն տեսին,
Սուսերամերկք լինելով
մէջ քաղաքին յարձակէին:
Եւ ժողովոցն բազմութիւն
մի զմիոյ հետ կասէին
Եւ առաջի ընթանային,
մինչեւ ի դրունս դղեկին:
Իսկ մարդադէմն գազանաց,
զսայրասուրսն քամէին
Եւ որպէս զայլք ի հօտ գառանց՝
ի մէջ նոցունց անկանէին:
Առ հասարակ կոտորէին,
արեան վտակք հոսէին,
Չերիտասարդս եւ զմանկունս
անխնայապէս խողխողէին:
Յայիս ծերոց ոչ գթային,
ոչ ի հասակն տղային:
Ո՛չ ի պատիւ քահանային,
ո՛չ յաստիճան հայրապետին,
Մինչ զի յարեանցն ճապաղիս
ծերոցն ալիք ներկանէին:
Եւ քահանայքն խորհրդին
ի սուրբ արեան Կենարարին
Չարինս իւրեանց յայն խառնէին
եւ ընդ նոսին թաթաւէին,
Քանզի արեան էր ծարաւի,

Եւ արբեցաւ սուրն նոցին:
Առիւծ գոչէր ի յանտառին,
Եւ գիշախանձ արջն՝ ի բային,
Բայց զհանդէպն ողորմագին,
որ դառնագոյն է լսողին,
Չէ բաւական բան ասողին՝
պատմել զաղէտն սաստկագին:
Քանզի յորժամ գայլքն մտին
Եւ շունքն լիրբք պաշարեցին,
Չհօտս ոչխարացն ցրուեցին,
զանմեղ գառինս պատառեցին:
Յայնմ երկիւղէ զարհուրէին,
բարձր ի դղեակն դիմէին:
Իսկ չարութեան արբանեկին,
որ պահապան էր կլային,
Չդրունս եղեալ ընդդէմ նոցին՝
ոչ թուլացոյց զմուտ բերդին:
Եւ բազմութիւնք փախստէին,
յահէ սրոյն խուսափէին,
Ամենեքեան անդ փութային,
իբր յապաւէն անկանէին,
Մի զմիով անցանէին,
առ ի ճեպոյն տագնապէին:
Եւ զի փակեալ մուտն առաջին,
Եւ թշնամեաց սուրն՝ վերջին,
Յայնժամ առ դրունսն կուտէին
իբրեւ զշեղջս անհնարին,
Կամ յօրինակ մայրից փայտին՝
միմեանց վերայ դիզանէին
Արք եւ կանայք, ծերք եւ տղայք,
մանկունք՝ ւ ամէն չափ հասակին:
Դստերք ի մարց լային գրկին
Եւ ընդ լալոյն նուաղէին,
Մարք զտղայսն գրկէին,
ի միասին մեռանէին:
Հարքն ընդ որդւոց տառապէին,
թէ փրկութեան հասանիցին,
Որդիքն ընդ հարցն ջանային,
զի ի յանդորր ելանիցեն:
Այլ զի չէ այր ոք օգտակար,
ոչ ձեռնտու՝ ի յայն վայրին,
Միայն յերկինս ամբառնային
զաչս մտաց կողկողագին:
Եւ զի խօսել ոչ կարէին,
յոզւոց հանելն հեղձնուին:

Եղբայր եղբոր ոչ օգնէին,
եւ ոչ ի քորսն գթային,
Թէ եւ կարի յոյժ սիրէին
՝ւ աղէկոտոր իսկ լինէին,
Բայց փրկութեան ձեռն ոչ տային,
զի եւ շարժել ոչ կարէին:
Իւրաքանչիւր յիւրում տեղին
ուր պատահեացն՝ անկանէին
Եւ ի շնչոյն նուագութեանց
հեղձամղձուկ անդ լինէին:
Իսկ փախստեայքն, որ շտապէին
յահէ սրոյն զարհուրագին,
Եւ յանկելոց դիակուտին
կէսքն ոտիւքն ընթանային,
Որպէս ի գետ կամ ի ծովի՝
վերայ գլխոցն լեղային:
Բայց այլազգացն բազմութիւն,
որ սուսերօքն ի հետ գային,
Իբրեւ գազանս վայրենի
ի մէջ հօտիցն անկանէին:
Իւրաքանչիւր որ ըստ մտին՝
առ յընտրութիւն պարապէին,
Քանզի զոմանս գերէին,
որք գեղեցիկ դիմօքն էին
Առ յուստերաց եւ դստերաց,
ընդ որս ինքեանքն հանէին:
Իսկ զցեալսն հասակաւ
զայն չարաչար խողխողէին.
Եւ զխեղդելոց դիակուտին
մարմինս արտաքս քարշէին,
Չորս գննէին, կողոպտէին,
մերկ, խայտառակ զայն թողուին:
Ո՛չ պատանօք զոք պատէին,
ո՛չ վերարկուս արկանէին,
Օրինաւոր ո՛չ թաղէին
եւ ո՛չ կոծովք յուղարկէին:
Անդ ո՛չ գոյր երգ քահանային,
եւ ո՛չ հնչումն աստուածային,
Ո՛չ պաշտօնեայք սաղմոսէին,
ո՛չ սարկաւազք ընթեռնուին:
Թէպէտ յերկինս ոգիքն էին
եւ յԱստուծոյ են ի ձեռին,
Որոց անուանքն դրոշմէին
ի դպրութեան կենաց գրին,
Սակայն մարմինքն անպատուէին,

զի յապաժոյժ թաւալէին:
Չորս ընդ քարինսն հոսէին՝
իբրեւ զգէշ անասնային,
Ի գագանաց գիշատէին
եւ կերակուր շանց լինէին:
Յորմէ եւ բան մարգարէին
յառաջագոյն գուշակեցին
ՅԵրուսաղէմ խօսեալ բանին,
որք եւ առ իս կատարէին:
Չարիւն սրբոց յերկրի հեղին,
որպէս հոսանք ջուրց վտակին,
Չքահանայս եւ գժողովուրդս
առ հասարակ խողխողէին:
Չորից ազգաց քրիստոնէից
զլուխք հօտից, որք աստ կային,
Դաղմատիայն եւ Թորգոմին,
Յունականին եւ Ատրին,
Առ հասարակ զանձինս եղին,
մինչեւ ի մահ գուն գործեցին,
Քաջ եւ արի հովուապետին
գործովք բարեաց նմանեցին:
Ո՛չ վարձկանաց նման փախեան
ի տեսլենէ չար գագանին
Եւ ո՛չ զհօտն մատնեցին
եւ կամ զանձինս ապրեցուցին,
Այլ քաջապէս հարկանէին
ընդդէմ զայլոյն պատառողին,
Մինչ զի ի նմին պատերազմին
արիացեալ ի հանդիսին՝
Հռոմայեցւոց հօտապետին
զանձն իւր ի մահ ետ ընդ հօտին,
Եհեղ զարիւն իւր ընդ նոսին
նման Յուդա Մակարէին:
Եղիազարն այն առաջին,
որ քահանայն էր ստուերին,
Բարերարոյն՝ ըստ գովեստի
եւ ծերունին՝ ըստ հասակին,
Նաեւ Հայոց ազգաց ցեղին
եպիսկոպոսն ընտրեալ նոցին,
Թէպէտ մահու ոչ մատնէին,
ըստ ինամոց բարերարին,
Այն, որ պահեաց ի մէջ կուտին,
որպէս զՅովնան՝ ի փոր կիտին,
Մակայն յորունց ի հանդիսին
յաղթող գտաւ յասպարիզին,

Անձամբ տուեալ գանձն իւր ի մահ,
իբր յօրինակ հօտից նորին:
Բայց զի հնար ոչ լինիցին,
զոր աստանօր կատարեցին,
Մի ըստ միոյ գրել բանիւ
զիւրաքանչիւր գովեստ անձին,
Չի այս անկար՝ շարագրողին
եւ անհնար՝ բանաւորին,
Ոչ թէ տկար միայն անձին
եւ անտեղեակ քերեալ տառին,
Այլ եւ նոցուն ներարիեստին,
որք պանծալի գոլով սովին:
Բայց մեք ի կարգ անդր առաջին,
դարձեալ սկսցուք աստ վերստին,
Մինչեւ յանգեալ վախճանեսցին
պատմեալ աղետս ողորմագին:
Քանզի իբրեւ զշունք հասին
եւ ցուլքն գերք պաշարեցին.
Անմեղ գառանցն ի հետ մտին,
իւեղդմամբ եւ սրով վախճանեցին:
Որք յայնմանէ գերծանէին,
սակաւք ի դղեակն ամրանային,
Յոր հուպ եկեալ բռնաւորին՝
զայս ասելով բան առ նոսին.
Իմում թէ ոչ լսէք բանի,
եւ հնազանդեալ՝ տայք ի ձեռին,
Լինիք եւ դուք նման սոցին՝
անկեալք գէշ գազանային:
Բայց նոքա ոչ զանգիտէին
եւ տալ ի յանձն ոչ առնուին,
Այլ քաջապէս յոյժ պնդէին,
արիաբար հաստատէին:
Սակայն զի ոչ յառաջագոյն
Անդ կերակուրք համբարեցին,
Եւ ոչ զշուրսն, որ ի ներքուստ
վերաբերեալ պատրաստէին,
Նաեւ զօրաց Քրիստոնէին,
որք ժողովեալք ի միասին,
Չարար տեղեակ ոք զնոսին,
թէ՝ ահա մերձ գան եւ հային,
Վասն այնորիկ ոչ կարացին
տեւել յերկար ընդդէմ չարին,
Այլ յետ աւուրց ինչ պայմանին,
տուեալ արտաքս ելանէին:
Իսկ դիւարնակ նենգաւորին

Եւ խորամանկ չար խաբողին
Ջուխտն ստեր, գոր եղ նոցին,
որպէս բնութիւն էր այս նորին:
Ընտրէր գղասս զօրականին,
յորոց ունէր խոց ի սրտին,
Տայր նշաւակ՝ կանգնել յոտին,
նետիւք խոցէր իւրով ձեռին,
Չոր յաղթութիւն յապագային
մեծ վարկանէր իւրոյ անձին,
Նաեւ վարձուց փոխարինին,
ըստ ժանդագործ օրինադրին:
Չինքն կարծէր ողորմելին
վրէժխնդիր երկնաւորին,
Որում նուէր աստուածային
մատուցանէր զարիւն նոցին,
Որպէս եւ բանն Տէրունին,
յառաջագոյն գուշակեցին:
Արդ, իբրեւ զայս կատարեցին,
գորս ի շատէն փոքր ասացի,
Չգերելոցն, որ գերեցին,
եւ գորս արեամբ սրով սպանին,
Չինչս եւ զգոյս կողոպտեցին,
զհարց եւ զհաւուց գոր պահէին
Չոսկիակուռ զարդ կանացին,
եւ զպատուական հանդերձանին,
Չարծաթեղէն զոսկեղինին,
զանօթ սրբոյ պատարագին,
Չունակ բուրման անոյշ խնկին,
եւ զհնչող քշոցանին,
Չվարագոյրսն խորանին
եւ զհանդերձանս սեղանին,
Չքահանայից զարդ հանդիսին,
զհայրապետաց պատմունճանին,
Չպատուական նափորտանին,
զեմփորոն սուրբ խորհրդին,
Չոսկէնկար տիպն ուրարին,
այն որ զուսովքն պատէին,
Չականակապ քառակուսին,
որ էր նման սուրբ վակասին.
Չբազմագունեան գործ հրաշալին,
այն, որ ի քղանցս հանդերձին.
Եւ զայն ամէն, որ ըստ կարգին,
որոց ողբումն է յիշելին,
Որովք ի տօնսն Տէրունին
վայելչապէս զարդարէին,

Իբրեւ փեսայ յառագաստին
կամ որպէս հարսն ի տանարին:
Քահանայք, սարկաւագունք
կարգ ըստ կարգի պար առնուին,
Եւ հայրապետն այն ի միջին,
որպէս գլուխ՝ բոլոր հօտին,
Շրջան առեալ յեկեղեցին,
մեղմօրինակ անդ ճեմէին:
Իսկ ժողովոցն բազմութիւն՝
արք եւ կանայք, որ անդ կային,
Չհետ հետոց ընթանային,
որպէս եւ հօտն զկնի հովուին,
Ի մի բերան փառատրէին,
զերգս ի բարձունս առաքէին:
Ընդ անմարմնոցն Սրորէից,
զերեքսրբեանն հնչէին,
ՉԵրրորդութիւնն գովէին,
մի Տէրութիւն դաւանէին:
Արդ, փոխանակ այսր ամենի,
դուք լուարուք՝ զինչ լինիցի.
Կամ դառնաբեր պտուղ չարին
գորս ընդ որոց փախարկեցին.
Չի հեթանոսքն իբրեւ մտին
եւ զիս արեան գետով լցին,
Չիմ գեղեցիկ ծնեալ գորդին
աստ ի գրկիս խողխողեցին:
Յայնժամ պղծեալ գարշապարաւ
գարբութիւնսն իմ կոխեցին,
Չսուրբ տանարսն պղծեցին
եւ զսեղանս կործանեցին
Եւ գտերունեան նշան խաչին
նոյից կոխան զայն առնէին,
Եւ զպատկերս աստուածային
մարմնացելոյ Հօրն Բանին
Եւ զարքոյ Աստուծաճնին
եւ զայլ սրբոցն, որ ըստ կարգին,
Կոխէին, անարգէին,
հայիոյութեան բանս ասէին:
Իսկ առաջնորդք չարեաց նոցին,
որոց մամուլս անուանէին,
Ի բարձրութիւնս ելանէին,
ուր զգանգակսն հնչէին:
Չայնիւ մեծաւ անդ գոչէին,
աղաղակաւ զայս ասէին,
Թէ՛ Այսօր քեզ մեծ աւետիք,

Մահմետ, պատգա'նդ երկնաւորին,
Դարձեալ առաք, գոր կորուսաք,
զքո սեփական տուն եւ տեղին:
Յայս մոլորեալ ժողովրդոց,
յերկրպագուաց անշունչ քարին,
Չորոց արեամբ լցաք զերկիր,
ըստ հրամանի քում Դուրանին:
Ահա եւ քեզ ձայն աւետեաց,
մեծդ Մաքքա, տո'ւն Մահմետին,
Յորում է յոյսն ի Սեաւ քարին
եւ հետեւումն մի ոտին.
Չի այժմ առ քեզ փոփոխեսցուք.
զերկրպագուսն արեւելին,
Չմոլորեալսն զհետ խաչին,
զպաշտօնեայսն Յիսուսին:
Չայս ասելով խրախճանային,
երգս եւ խնճոյս յօրինէին,
Ծափս ծափի հարկանէին,
ոտիւք վագեալ կաքաւէին:
Այլք ի չարին յարբանեկին,
որոց դագիք անուանէին,
Իբրեւ զշունս կատաղիս
յորսոց վերայ յարձակէին,
Չարիւնս առեալ զսպանելոցն
զանձինս իւրեանց օժանէին:
Եւ զորովայսն հերձուին,
զլեարդսն հանեալ խաժանէին
Եւ զգլուխսն քերթէին
՝ ի Խորասան զայն տանէին,
Չի ի նոցունց վարձս ընկալցին
ըստ սպանելոցն համարին:
Իսկ անօրէն պիղծ վիշապին
եւ չարաթոյն բռնաւորին,
Այն, որ նման գոլով Նեոին,
եղջիւր ամբարձ դէմ Արարչին,
Արհամարհեաց զյարկ տաճարին,
զաստուածընկայն եւ հրաշալին,
Չանուանակիրն Յովհաննու՝
զՄկրտիչ մարգարէին
Կամ զաւետեաց քարոզ բանին,
իբր համանուն գոլ երկոքին:
Եմուտ անդ զարշն եւ պղծալին,
արիւնահեղն եւ նենգով լին,
Հանդերձ զօրօքն, որ ընդ նմին,
պաշտօնէիւքն Մահմետին:

Եւ ի սեղանն աստուածային,
յոր միշտ զենոյր Աստուածորդին,
Հարնս նստոյց երգել ի նմին
ի գինարբուս ըստ Հերովդին,
Անդ, ուր հրեշտակքն հնչէին
եւ սերորէք սաւառնէին,
Քերորէքն ակումբ կային,
եւ պետութիւնքն սարսէին,
Յորժամ երկնից թագաւորին
գալուստ լինէր յեկեղեցին,
Եւ անարատ եւ սուրբ գառին
հեղոյր արիւնն ի սեղանին՝
Ի հաշտութիւն Հօրն վերին,
՝ ի քաւութիւն մեղաւորին:
Բայց ոչ միայն անդ առնէին
գանարգութիւնս, որ ասէին,
Այլ յամենայն խորանս սրբոց,
որք աստանոր շինեալ կային:
Յիւրաքանչիւրսն մտէին,
գարբութիւնսն պղծէին,
Գործ գարշութեան անդ գործէին,
գոր ուսուցեալ էր Մահմետին,
Չոր եւ խօսելն է աղտեղի,
յսելն գարշ՝ սրբասիրին:
Չոմանս ուղտուց տուն առնէին,
եւ գայս՝ իշուց ՚ի երիվարին,
Յոմանս ինքեանք բնակէին,
որ են վատթար, քան գանբանին:
Արդ, իբրեւ գայս կատարեցին,
ըստ թոյլ տալոյ բարերարին,
Չորս համառօտ եւ ծայրաքաղ
փոքր ինչ ցուցաք գաղէտս իրին,
Յայնժամ զգերեալսն բաշխէին,
մի առ միոյ պարգեւ տային,
Ի հեռաւորսն արձակէին
զգեղեցկատիպսն, որ ընտրէին,
Բարելացւոց թագաւորին
՝ ի Խորասան՝ մեծ սուլթանին,
Մնտոի մոլար՝ խալիֆային,
կոյր եւ կուրաց առաջնորդին,
Որ է յաթոռն Մահմետին՝
սուտ մարգարէ խարերային,
Իսաւարելոց օրինադրին,
չարեաց մեղաց ուսուցողին,
Այն, որ գործէ գաղտեղութիւն՝

զանասելին մարդոյ լեզուին.
 Ի ուսուցանէ իւր ժողովին՝
 գործել զնոյն զպղծալին,
 Եւ քաւութիւն մեղաց նոցին
 օրինադրէ զլուալին՝
 Ողորանիլ ջրով գետին,
 մաքրել միայն զերեւելին,
 Որով եւ գորտք, որ ի ծովին,
 առաւելուն, քան զնոսին,
 Իսկ զհոգւոյն վայելչութիւն
 մեղօք թաղեն միշտ ի տղմին:
 Արդ, այսպիսիս լուր աւետեաց
 գրով հնչէր յականջս նորին,
 Թէ՛ Աւետիք քեզ խնդալից,
 ահա զպաշտօն բարձի զխաչին
 Եւ զքաղաքս ամուր նոցին
 տապալեցի հիմն՝ յարեւին:
 Բայց այս սկիզբն իմոյ մարտին,
 որ վասն քոյդ է հաւատին
 Եւ ռասուլ քոյոյ նախնոյն՝
 պատգամաւոր փղամբարին:
 Այլ դու յիշեա զիս յուրբայթին,
 ի յաղօթելն ի մսքթին,
 Չի ես ահա վաղվադակի
 յերկրէ բառնամ զագգս նոցին
 Եւ սատակեմ զամենեսին,
 որք դաւանեն զԱստուածորդին:
 9
 Արդ՝ զայս գրէր անդ ի հեռին
 ՚ւ ինքն փքայր ոգւով չարին,
 Իսրոխտայր նման Ռափսակին,
 խորհէր՝ ջնջել զայս, որ կային:
 Ո՛չ զհտելով զայս յիմարին
 ՚ւ ո՛չ զմտաւ ածել կուրին,
 Թէ ո՛չ ուժով իւրոյ բազկին
 կամ զօրութեամբ իւր Մահմետին
 Եղել զՈւռհա առնուլ նմին,
 մատնել ի սուր ՚ւ ի գերութիւն,
 Այլ իմ մեղացն բազմութիւն,
 եւ յանախել գործոյ չարին
 Մատնեաց ի ձեռս անօրինին՝
 խիստ ՚ւ ապստամբ բռնաւորին.
 Որպէս երբեմն վաղագոյն
 սոյն այս լինէր Իսրայէլին,
 Պատուիրելով Տեառն՝ նոցին

ի ձեռն սուրբ մարգարէին.
Թէ ախորժէք եւ լսէք ինձ,
դուք ժառանգէք զբարութիւն,
Ապա թէ ոչ լսել կամիր,
զձեզ կերիցէ սուր գերողին:
Դարձեալ բանիւ Տեառն Աստուծոյ,
խօսի Դաւիթ ի Սաղմոսին.
և Եթէ թողցեն որդիքն քո
զօրէնս եղեալ իմ հրամանին,
Գաւազանաւն բարկութեան
հարում զմեղսն, որ գործեցին:
Իբրեւ յառաջ ժամանակին
յԵբրայեցւոցն առնէր յազգին,
Չայն, որ եհան յԵգիպտոսէ,
անցոյց ընդ մէջ Կարմիր ծովին
Եւ զմանանայն յանապատին
իջոյց յերկնից՝ նման ձիւնին:
Որոց ի տուէ՝ ամպ հովանին
եւ սին հրոյ՝ լոյս գիշերին,
Եւ խոստանայր տալով նոցին
զոր Աւետեաց երկիր կոչին:
Բայց իբրեւ ոչ նոքա կացին
յօրէնս եղեալ պատուիրանին,
Այլ զԱրարիչն իւրեանց թողին
՝ որթուն գլխոյ երկրպագին,
Ընդ Մաղիամ խառնակէին
եւ պղծութեամբ յերկիր լցին:
Էարկ տապաստ յանապատին,
երդուաւ ի յաջ իւր կենդանին,
Եթէ՝ մտցեն անդր ի հանգիստ
նոքա, որ զիս դառնացուցին:
Որք եւ յերկիրն պարգեւաց
մի յայնցանէ անդ ո՛չ մտին,
Այլ ջնջեցան անդր ի վայրին,
ոսկերքն անկան յանապատին:
Թողում ասել զտապանակին,
զոր ի Հեղեայ որդւոցն առին
Վասն չարեաց գործոց նոցին,
զոր առ խորանն գործեցին,
Յորս երեսուն հազար դասին
յայն օր անկան Իսրայէլին.
Նոյն եւ Հեղեայ քահանային
պատուհասեալ բեկմամբ ողին:
Հեբրայեցիք դարձեալ նոքին,
որ Յակոբեան որդիքն էին,

Յորժամ յերկիր բղխիչ կաթին
ըստ աւետեաց հարցն մտին
Եւ ստուարացեալ գիրանային,
զուխտն առաջին մոռանային,
Չորս մարգարէքն խրատէին,
եւ գալ չարեաց բողոքէին,
Պատասխանի խիստ առնէին,
եւ ի տաճարն պանծային:
Յայնժամ Հոգին աստուածային
գայս բարբառէր ընդդէմ նոցին.
Լ Ի սրբութիւնսդ իմ սկսանիմ
ածել զաւերն ի տաճարին,
Յորս ի հարկէ շարժեալ բարին
ի դառնութիւն վասն նոցին,
Էսձ հասոյց զԶաղդէացին,
մատնեաց ի ձեռս անօրինին:
ՉԵրուսաղէմ քաղաքն ընտրեալ
առին յաւար 'ւ ի գերութիւն
Եւ զտաճարն զհրաշային,
գայն, որ շինեալ Սողոմոնին:
Չկեփագեան զոսկին առին,
զկազմած զարդին կողոպտեցին
Եւ զժողովուրդն սեփական
զերի առեալ խաղացուցին:
Ի հետիոտս տանէին,
քաղց եւ ծարաւ պանդխտէին,
Ի Բաբելոն նստեալ լային,
մինչ զՄիոն անդ յիշէին:
Եւ այլք բագումք են, որ պատմին
մեզ յօրինակ նախ քարոզին,
Եթէ չխնայէ յիւր սիրելին
ի ստունգանել պատուիրանին,
Այլ եւ խրատէ նա սաստկագին
յոյժ առաւել, քան զատելին,
Որպէս եւ հայրն զիւր որդին
փութայ խրատել, 'ւ ոչ զօտարին.
Կամ տէրունեան սուրբ առակին
յերկաքանչիւրն ծառային`
Կամացն Տեառն գիտողին
եւ արժանի գործեալ տուժին,
Արբցէ, ասէ, զան բազմագին,
քան զայն, որ ոչ գիտէր բնաւին:
Ուրեմն, այս ինձ պատահեցին,
ըստ իրաւանց եկին հասին,
Քանզի լցայ գործովք չարին

եւ չարարի զկամս նորին,
Այլ հաւասար ազգ մարդկային,
ամենեքեան, որ յիս կային,
Իւրաքանչիւր որ հասակին
յանդգնարար մեղանչէին,
Բարեաց գործոց հեռանային,
եւ ի չարիսն հպէին:
Ծերք եւ մանկունք, արք եւ կանայք,
յախոս մեղաց անկեալ կային:
Քահանայք՝ քարոզք բանին
եւ սպասաւորք սուրբ խորհրդին,
Անխրատարար վարուք էին,
գոր չէ ասել պարտ՝ գործէին,
Ապա ի սուրբն սրբութեանց
անմաքրապէս մերձենային:
Եւ այսպիսի գործովք չարեաց,
որովք ի նոյն անգեղջ էին,
ՉԲարեղոնի բոցն իջուցին,
զհուրն եւ զծծումբն Սողոմին,
Չերկրի բերան անձանց բացին,
որպէս Կորիսայ եւ Դադանին:
Այլ զի ոմանք ընդդէմ բերին
եւ աստանօր հակառակին,
Ասեն՝ զիա՛րդ իրաւացի
այս է վճիռ դատաստանին.
Միթէ միայն մեղան նոքի՛ն,
քան զազգս ամէն քրիստոնէին.
Չի՞ յայսքանեաց բիւր քաղաքաց
պատիժ նոքա միայն կրեցին.
Կամ թէ արդա՛ր արդեօք էին,
յորոց ի ձեռսն մատնէին՝
Չանգի եւ իւրքն առ հասարակ,
որք զոսսա չարչարեցին:
Բայց լուիցէ այժմ այնպիսին
պատասխանի իւրում բանին.
Ոչ ի յինէն բան մարդկային,
այլ ի Տեառնէ յոյժ զհտողին:
Որ վասն անկեալ աշտարակին
ի Սելովամ տասնետութին
Կամ ընդ գոհից Գալիլէին
զարիւն խառնեալ Պիղատոսին,
Մի՞թէ արդեօք, ասէ, էին
մեղօք միայն լցեալ նոքին:
Ասեն՝ թէ ոչ ապաշխարէք,
լինիք եւ դուք նման նոցին:

Արդ, այս խրատ է մարդկային
հանուրց բոլոր բարեպաշտին.
Ոչ ի հաւատն ճշմարիտ
ունել միայն վստահութիւն,
Այլ եւ գգործս արդարութեան
միաբանել ընդ հաւատին.
Քանզի մեռեալ հաւատք ասին,
որում եւ գործք ոչ հետեւին,
Ապա թէ ոչ յայս կրթիցին,
որ է օրէնք աստուածային,
Իւրաքանչիւր որ առանձին
ակն ունիցի պատուհասին
Կամ այս կենօքս, որ ի մարմին,
կամ յանաչառ մեծ ատենին:
Իսկ որ ի ձեռսն մատնեսցին
հաւատացեալք անհաւատից,
Մի՛ յայս տգէտք լինիցին
աստուածական դատաստանին:
Քանզի որպէս յերկրաւորիս
այս է հրահանգ դատաւորին,
Չի սուր ածել մահապարտին
կամ պատուհաս՝ չարագործին
Ո՛չ հրամայէ մեծ իշխանին
կամ սիրելի բարեկամին,
Այլ անարժան մարդոյ վերջին,
եւ դառնագոյն դիմաց դահճին:
Սոյնպէս եւ այս տնօրինին
առ երկնաւոր թագաւորին.
Որպէս տանջանքն Եգիպտոսին
չար հրեշտակօք լինել ասին,
Կամ կռապարիշտ բարբարոսօքն
զազգն տանջէ զԻսրայէլին,
Կամ առ ի խրատ զարհուրագին
դիւաց մատնէ զոմանց մարմին,
Եւ կամ բերումն կարկտին
եւ եղեման խստագունին,
Կամ անձրեւաց զալ անչափին,
կամ՝ անխոնաւ խիստ երաշտին,
Կամ՝ բազմութեան յոյժ մարախին,
կամ՝ դալընկին եւ մնինային,
Եւ կամ՝ մկան զագրագունին
ի յեռացումն անդաստանին:

10

Արդ, մի՛ պարծիր, ո՛վ անզգամ
ժանտ եւ ժպիրի, չարեօք փարթամ,

Թէ՛ գօրաւոր քոյին ձեռամբ
զիս հնձեցեր դու տարածամ
Կամ Մահմետին քո պաշտամամբ
առեր զամուրս անյաղթական:
Եւ մի՛ կարծէր, ամբարտաւա՛ն,
զքեզ հսկայ եւ յաղթանդամ,
Քանզի նման ես դու մկան,
որ սատակմամբ պղծէ զթան,
Կամ աղտեղի կոյր խլրդան,
որ կայ յանլոյս խորս մթան,
Որ ի ծածուկ, ՚ւ ոչ յայտնական,
փորէ զգետինն քեզ նման,
Կամ զերդ թրթուր զագրաբերան,
թիւնօք դեղէ զբուրաստան,
Եւ կամ մարախ յոյժ բազմազան
զհիւթն ծծէ զդալարական:
Որ մինչ հրամանքն արարչական
կամի գտանջելն՝ նոքա գան,
Իսկ ի նայելն քաղցր ակամբ
դարձեալ ջնջէ զայն սատակմամբ.
Չմուկն եւ զխլուրդն միաբան
ջրով խեղդէ խոր հեղձական,
Իսկ զմարախն յոգներամ
ուտէ, հալէ տարմին բերան:
Այսպէս եւ դու, թշուառակա՛ն,
մնայ չարեաց քեզ ի վախճան,
Թէ՛ ՚ւ ինձ եղեր մահու դարան,
գուր փորեցեր կորստական,
Յաւօք լցեր զիս տխրական,
կենացս եղեր իմ դաւաճան,
Որ զիմ տղայս վայելչական
փաղաղեցեր զերդ զգազան
Եւ նստուցեր զիս ի մթան,
իբր զմեռեալ ի գերեզման:
Արդ, լուր եւ դո՛ւ, փտեա՛լ գերան,
մերձ ի յանկումն կործանման,
Քանզի ահա թուրն ազդական,
սուրն սրեալ աստուածական,
Այն, որ է Բանն հայրական
քան զերկսայրի սուր հատական,
Պարանոցիդ վերայ շողան,
ըմպել զարիւնդ մմմռան:
Որ զբաժակն դառնասհամ
ինձ արբուցեր զյիմարական,
Արդ զմրուրն վերջնական

արբցես եւ դու գգլորական:
 Որ տարապարտ մարտեար ընդ իս,
 չար հատուցեր սիրոյն փոխան,
 Ընկա՛լ եւ դու վրիժուց տուգան,
 առցես ի ծոցդ եօթնական,
 Առա՛կ լիցիս յագգ ամենայն՝
 տիպ ՚ւ օրինակ որդւոց մարդկան:
 Որք տեսանեն, եղո՛ւկ քեզ տան,
 վայ ի վերայ վայրի կարդան,
 Այս այր, ասեն, ամբարտաւան
 չարար գԱստուած իւր օգնական,
 Այլ յուսացաւ յուժ մարմնական
 ՚ւ ի մեծութիւն իւր նանրական:
 Վասն այսորիկ աստուած իսպառ,
 կործանեսցէ զքեզ յաւիտեան
 Եւ իլեսցէ զարմատս քո,
 յերկրէ հանցէ կենդանական:
 Չարք ամենայն, որք անիծան,
 ի սկզբանէն մինչ ի վախճան,
 Ի վիշապէն, որ քեզ նման,
 եւ ի յորդոյն յայն կորստեան,
 Վերագայցեն քոյդ գագաթան,
 զքեւ պատեն որպէս պարան,
 Եւ սատանայ դէմ յանդիման
 կացցէ յաջմէ քո օգնական:
 Արդ, եղիցիս դու հալածեալ,
 որպէս փոշի հողմով հոսեալ,
 Ի հրեշտակէ Տեառն նեղեալ,
 իբրեւ գդեսն անհետ եղեալ:
 Եւ ճանապարհի քո խաւարեալ,
 յաջ եւ յահեակ քեզ պաշարեալ,
 Արագապէս փոյթ ժամանեալ
 քեզ որոգայթ անգիտացեալ,
 Որսն, զոր ինձ գաղտ թաքուցեալ,
 առցէ զոտիւքդ խորտակեալ:
 Ի գուր խորին ապականեալ
 իջցես դու անդր կորուսեալ
 Իբրեւ գՌադան գետին կլեալ,
 Կորիս ՚ւ Աբիրոն յերկրէ ծածկեալ:
 Քանզի քեզ այն բաժին հասեալ,
 արիւնահեղ նենգով լցեալ,
 Մրով արեւդ պակասեալ՝
 լիցիս տանեաց խոտ ցամաքեալ:
 Եւ ժամանակ կենացդ հատեալ,
 յորում է յոյս քո հաստատեալ:

Ընդ քեզ եւ ազգդ կորուսեալ,
 Հագարացւոց լիցին ջնջեալ:
Որդիք ձեր՝ որբ, կանայք՝ գերեալ,
 լիցին մուրողք եւ աստանդեալ,
Ելցեն յարկացն տարագրեալ,
 փոխան իմոցն տատանեալ:
Չինչս եւ զգոյս ձեր վաստակեալ
 առցեն օտարք յափշտակեալ,
Չոր հատուցէքն ինձ չարչարեալ,
 դարձցի ի գլուխ ձեր բազմացեալ:
Արդ, մի՛ գտցի ձեզ օգնական
 կամ ձեր որբոցն որ ողորմեալ,
Այլ եղիջի՛ք դուք տատանեալ,
 հանդերձ ծննդովք՝ յազգէ ջնջեալ,
Ձեր յիշատակ յերկրէ բարձեալ,
 ի մէջ մարդկան ոչ յիշեցեալ:
Գործ զանիծից դու գործեցեր,
 վասն այսորիկ գայն սիրեցեր:
Արդ, քեզ ելցէ կարճի յօրեր
 եւ Կայենին հասցէ երեր,
Ի դառնութիւն դարձցին տարերք,
 ջրհեղեղին ելցեն գետեր:
Մեաւ ամպ, մթին, կարկտաբեր,
 զքեզ արասցէ անպտղաբեր,
Սողոմայ հուր ծծմբաբեր
 իջցէ ի գլուխդ արինակեր:
Քան զՓարաւոն Եգիպտացին
 խիստ եւ վայրագ սրտիւ եղեր.
Ոչ զմանկունսն Իսրայէլի
 միայն զարուսն սուգեցեր,
Այլ հաւասար խողխողեցեր,
 յարեան վտակսն խեղդեցեր:
Արդ, անդրանիկ, զոր սիրեցեր,
 դու եւ քոյին տոհմի որեր
Ի հրեշտակէն յայն մահաբեր
 սատակեցին յանոյս գիշեր:
Չանմեղ գառինս պատառեցեր,
 ո՛վ դու եւ քո ազգի գայլեր,
Յաղջամղջին ոչ ի Կարմիր
 ծովն անդնդոց ընկղմեցեր,
ՉԱմաղեկաւ չարեօք զանցեր,
 զնոր Իսրայէլ չարչարեցեր:
Իսրայէլին Աստուած Յիսուս
 զքեզ արասցէ անմանկաբեր,
Հարցէ զարեւդ ի սուր սուսեր,

իբր յանխնայ զիս դու հարեր:
Եւ զքաղաքս քո՝ յաւեր,
զերդ զԵրիքովն հիմն ի վեր,
Որ զՔանանուն ջնջեաց զազգեր
Յեսուաւ՝ յերկրէն աւետաբեր,
Նոյն արասցէ Տէրն իմ Յիսուս՝
զքեզ տարագրեալ եւ տարաբեր:
Չերդ Գողիաթ Փղշտացին
յոյժ ի հասակդ փքացեր,
Պիղծ քո դիւօք նգովեցեր
եւ պերճալի զքեզ ինձ ցուցեր:
Արդ, ի Դաւթայ ծնեալ մանուկ՝
Տէր եւ Որդին խորհրդաբեր,
Հարցէ զքեզ այդր ի ճակատ
երեքքարեան եռանձնաբեր.
Առցէ զգէն, յոր յուսացեր,
բաշխէ զաւարն, զոր առեր,
Հատցէ զգլուխդ քո սուսերբ,
որպէս եւ անդանօր տեսեր:
Ռափսակայ նմանեցեր,
զեղջիւրդ ի յամպս հասուցեր,
Բանս առ բարձրեալն խօսեցեր,
եւ ի յերկինս զբերանդ եղեր:
Արդ, ի դժոխս իջցես ի խոր,
քեզ անկողին՝ մէջք եւ ցեցեր,
Եւ նոյն հրեշտակն մահաբեր
սրով հատցէ զքեզ ի յազդեր:
Անտիոքոս երկրորդ եղեր
եւ զԻսրայէլս գերեցեր,
Չտուն Յուդայեան յաւար առեր,
զՄակաբեանք չարչարեցեր:
Արդ, հատուցի քեզ փոխարէն
չարեացն ամէն, զոր գործեցեր.
Տուն քո լիցի անհետ, յաւեր,
եւ դու՝ զերի, ազգով յերեր,
Տոհմ եւ ազինքդ քո թուրքեր
հալածեացին յերկրի յեզեր:
Հերովդէի նման գտար
՝ւ այլ առաւել գերազանցեր,
Չմայրն մանկամբն դու սպաներ,
զկաթն ընդ արեանն խառնեցեր:
Արդ, զի դու յիս ոչ խնայեցեր
՝ւ ողորմութեամբ ոչ ներեցեր,
Եւ քեզ յաւուրն չարութեան,
մինչ տագնապիս սարսռաբեր,

Մի՛ գթասցի աջ Արարչին
 Դու ոչ խնայեսցի ողորմարեր.
 Այլ ի մօտոյ, մերձ ի յօրեր
 հեղու զմթերն, որ զանձեցեր,
 Յաւուր վրիժուցն հատուցման,
 մինչ հարկանի ոտն զքարեր,
 Զանգի իսպառ բարկացուցեր,
 զքաղցր եւ զքարին դառնացուցեր:
 Ահա մերձեալ օր կորստեան,
 եւ ժամանակ թշուառարեր,
 Չի է հասեալ պատրաստաբար
 Տէրն ի վերայ քո վրիժաբեր:
 Այն, որ գոչէ աստուածաբար,
 զինքն յայտնէ մարդկան ի վեր,
 Չաջն արձակէ վրէժխնդիր,
 զսուրն սրէ փայլակնաբեր,
 Արբուցանէ զնետս իւր յարեանդ,
 եւ կերիցէ զմիս քո սուսեր,
 Մինչեւ առցէ բազմապատիկ
 զվրէժ արեանն իմ, զոր հեղեր:
 Այս յառօրեայս եւ յանցաւորս,
 յորում ունիս փոքր ինչ օրեր,
 Յոր հուպ եղեալ է քեզ տապար
 եւ հատանէ որպէս ծառեր,
 Բայց ի՞նչ լինիս, ո՛վ եղկելի,
 յայն ահագին օրն ահաբեր,
 Որ սպանելոցն է կենսաբեր,
 եւ քեզ՝ կրկին նա մահաբեր:
 Նոքա թռչին ամպովքն ի վեր,
 ի հրեշտակաց խառնին դասեր,
 Իսկ դու կոծիս անդր առընթեր
 քո Մահմետովն, յոր յուսացեր.
 Դիւաց խառնիք դուք ի գնդեր,
 զորոց զկամսն գործեցեր:
 Նոցա դրախտին բանին փակեր՝
 երկնից դրունքն լուսաբեր,
 Զեզ՝ դժոխոց բացեալ բերան
 եւ տարտարոսքն ցրտաբեր:
 Ի հուրն անշէջ կիզողական
 անքուն որդանցն լինիս կեր:
 Իսաւարն անլոյս Դու անօսրաբեր,
 թանձր եւ մթին, զերդ գոյն կպեր,
 Որ է նա հուր խաւարակերպ,
 չունի ճաճանչ ինչ լուսաբեր,
 Այլ թանձրամած, շոշափելի,

զինչ մութ յանդոյս է այս գիշեր.
Այրէ իսպառ, բայց ոչ ծախէ,
անհատ պահէ միշտ ի յերեր,
Ոչ զհագար ամ կամ զերկու
՝ ոչ զհարիւր հագար բիւրեր,
Այլ անվախճան է եւ աներբ
եւ յաւիտեան անպարաբեր,
Յոր անկանիք դուք անդանօր
այրիք որպէս հոսեալ յարդեր.
Կամ զորոմանն ընտրեալ բուսեր,
ի հրեշտակաց կապեալ խրճեր:
Յայնժամ լցցի բանն ասացեալ
Մարգարէին Դաւթի երգեր.
և Ուրախ լիցին արդարք ի Տէր.և
մինչ հատուցման լինին դատեր,
Չի ի յարեան մեղաւորին
լուսացեն զձեռս որպէս յաղբեր,
Եւ ասացէ մարդ արդարեւ.
և գուցէ Աստուած իրաւաբեր.
Առնէ բարիս, որք են բարիք,
տացէ չարացն անբաւ չարեր:
11
Բայց դուք, որդի՛ք իմ սիրելիք,
չէք ինձ մեռեալ, այլ կենդանիք,
Քանզի յերկրի նահատակեալք,
եւ ի յերկինս պսակիք:
Յաչս մարդկան մեռեալ կարծիք
եւ ի յայժմուս ողորմելիք,
Այլ յԱստուծոյ ձեռս լինիք
եւ կենդանի յուսով պահիք,
Ի հրեշտակաց այժմ երանիք
եւ յանմարմնոց դասն կարգիք:
Չմահկանացու մարմին լուծիք
եւ զհողեղէն տուն քակեցիք,
Այլ զեղեցիկ եւ հրաշալի,
անձեռագործ շինուած ունիք,
Որոյ շինող ճարտարապետ՝
այն, որ կապեաց կամար զերկինք:
Ի ձմերայնի վաստակեցիք,
յանձրեալքերս սերմանեցիք,
Չցորեանն ի հողն թաղեցիք,
յորում նեխեալ անդ լուծանիք:
Եղեմնապատ սառամբ լինիք
եւ ձիւնաթաղ ամբողջ պահիք,
Մինչ ի գարուն հողով ծածկիք,

ամեթացեալ պարարտասջիք,
 Յորժամ կենաց ցօղոյն արբջիք,
 վաղվադակի բուսանիցիք.
 Որոտընդոստ վերաբերիք,
 յանկարծակի վերերեւիք,
 Որպէս ծաղիկ բողբոջիցիք,
 սաղարթագեղ պանուճիցիք:
 Ծառոյն կենաց մերձեալ հալիք,
 ի մահացուն այլ ոչ խաբիք,
 Բազմաբեղուն ստեղն արձակիք,
 մինչ ի յերկինս հասանիք:
 Որք արտասուօքն ցանեցիք,
 յորժամ աստի անդր երթայիք,
 Խնդայք, ցնծայք զուարճալից,
 զորայն ի գիրկս առեալ՝ հրճուիք:
 Աշխատեցայք իբրեւ մշակք,
 ի տապ տօթոյ աստ քրտնեցիք.
 Յորժամ հնձէք, զոր ցանեցիք,
 յանմահական դրախտին հանգչիք,
 Ընդ զովարար տնկոյն նստիք
 եւ յաղբերէն կենաց արբջիք:
 Որ չարչարեացն զձեզ լացցէ,
 դուք խնդալից սրտիւք բերկրիք,
 Ի բոց հնոցին նա կիզանի,
 դուք ի վտակն Ադին շրջիք,
 Ի ձէնջ հայցէ լեզուին ջրիկ
 դուք ոչ տայցէք նմին կաթիկ:
 Նա ի բերան Բելիարայ,
 զոր խորտակէ նորին ժանիք,
 Եւ բնակութեան իւրոյ տեղիք
 է դժոխոց յատակ ներքինք,
 Իսկ ձեզ է զոգն Աբրահամին,
 ուր Ղազարոս՝ ի իւր նմանիք,
 Յորոց միջի վիհ անհնարին
 եւ անդրադարձ բնաւին չիք:
 Դուք ի ձեռաց Տեառն տանջեալք,
 զպարտս մեղաց կրկին առիք,
 Չտգեղ պատկեր չարեացն եղծիք,
 զոր ի մարմնի աստ ունէիք,
 Չամօթ բնութեանս մերկացիք,
 զաղտեղութիւն արեամբ լուացիք:
 Արդ, քան զձիւն սպիտակ լինիք
 եւ քան զկաթն մածանիք,
 Անճառ լուսով լուսաւորիք
 եւ թագ ի գլուխ պսակեսջիք:

Չայն նեղութիւն անդ ոչ յիշէք
գոր ի մարմնի աստ տեւեցիք,
Չչարչարանսն մոռասցիք,
՛ւ ի մահուանէ այլ չերկնջիք:
Թէեւ մեռայք այժմ ի մարմնի,
կեանք առ Զրիստոս ծածկեալ ունիք.
Յորժամ ծագի յարեւելից,
դուք ընդ նմա փառօք յայտնիք,
Յաջակողմեան նորին դասիք,
ընդ վկայիցն պսակիք:
Ի գոյն արեան կարմիր փայլիք,
գոր ինքնակամ ձերով հեղիք,
Արք ընդ արանց սրբոց բազմիք,
կանայք ի դաս կուսից կարգիք,
Անմեղ մանկունք, տղայք սիրունք,
ի հրեշտակաց գունդն խառնիք:
Իբրեւ փեսայ թագիւ պճնիք,
եւ որպէս հարսն զարդարիք,
Անճառ փառօք փառաւորիք,
բազմանկար գոյն պանուճիք,
Արեգական նման ծագիք,
յարքայութեան երկնից փայլիք:
Ընդ անմարմնոց դասս ցնծայք,
յիմանալեացն բերկրեսցիք,
Միշտ երգակից նոցին լինիք
ի լոյս փառաց Տեառն բնակիք:

12

Արդ, կենդանեացդ առ հաւասար
բանքս այս լիցին յոյժ մխիթար,
Որք էք ի լաց դուք անդադար,
նստիք ի սուգ ի տան խաւար
Վասն իմ հնձոցն տարածամ,
կանաչ բուսոց խորշակահար:
Եւ թէ ցրուած կայք ի յաշխարհ,
ի գերութիւն յերկիր օտար,
Եթէ ի սրոյն յայն մահարար
մնացեալ առ իս էք յուսաբար,
Եթէ այլուստ ոք բարեբար
յիս մերձեցաւ վշտակցաբար,
Կացէք յոտաց զուարճաբար,
զսուգդ լուծէք զվշտաբար.
Հանէ՛ք զգեստդ տխրաբար,
զգե՛ցիք պայծառ, ուրախաբար:
Մի՛ տրտմիցիք այլազգաբար՝
զերդ հեթանոս, կամ՝ հրէաբար,

Մի՛ ի երկիր հայիք ի չար
 եւ զայս կենաց առնէք վճար:
 Մի՛ յառօրեայս անասնաբար
 դնէք զոյս իրր անհանճար,
 Մի՛ զփափկութիւնս մահարար
 ասէք անձին կենդանարար:
 Մի՛ զմեծութիւն կորստարար
 համեմատէք կենացն անճառ,
 Մի՛ զցանկութեան ախտ հեշտարար
 համարիցիք զուարթարար:
 Մի՛ որք մեռանն աստ չարաչար
 լայք եւ ողբայք անյուսաբար,
 Զանգի ունիմք Տէր բարերար,
 որ բժշկէ զմեզ տիրաբար:
 Թէպէտ հարու ոչ սաստկաբար,
 այլ հայրօրէն եւ գթաբար,
 Զանգի սփոփէ զմեզ սիրաբար
 ՚ւ ոչ բարկանայ նա մեզ իսպառ:
 Ո՛չ ըստ մեղաց մերոց արար,
 ո՛չ ըստ չարեացն ածէ վճար,
 Այլ ըստ երկնիցն բարձրութեան
 զողորմութիւն իւր բարձր արար
 Եւ ընթացիւք արեգական
 հեռի ի մէնջ զմեղս արար,
 Չի անհնարինքն է նմա հնար,
 անկարելիքն՝ դիւր եւ կար:
 Ահա սակաւ ինչ ժամանակ
 փոխէ զպղտոր ջուրն ի յստակ
 Եւ տայ ըմպել դառնաճաշակ
 այնմ, որ արբոյց ինձ դժնդակ,
 Չվերջին մրուրն կապուտակ
 արբուցանէ նմին բաժակ,
 Իսկ ինձ՝ պայծառ եւ քաղցրունակ
 զանմահարարն ըմպել վտակ:
 Ոչ թէ իմոյն միայն դիմակ,
 զոր ինչ հատոյց ինձ ձախողակ,
 Այլ եօթնիցս չափ կրկնակ
 դարձցի ի ծոց իւր հակառակ:
 Իսկ զկապեալսդ որ էք ի փակ,
 արձակեսցէ Տէր ընդ արձակ
 Եւ զգերութիւնդ իմ վտարակ
 դարձուցանէ այսրէն ի յարկ,
 Մատնէ զգերիչս իմ ի յապտակ,
 սուր ՚ւ ի զնդան՝ ձեր փոխանակ:
 Շարժէ կրկին զազգն ֆռանկ,

անհուն հեծեալ եւ հետեւակ:
Իբրեւ զծովու ավեաց կուտակ
բորբոքելով գան խիստ ու բարկ,
Ափան գետոց աւզի գունակ
կամ գերդ աստեղք երկնից ի կարգ,
Լնուն զամէն երկրի յատակ
որպէս զձիւն ասրաքատակ,
Հնչեն գերդ հողմն հիւսիսակ,
զամպն վարեն զհակառակ:
Մաքրեն զաշխարհս բովանդակ,
յանհաւատիցն առնեն դատարկ,
Չմահմետական ազգ հասարակ
առնուն յաւար եւ յասպատակ:
Գերեն զԽորինն Խորասան,
զԲաբել առնեն խիստ աւերակ
Եւ զանապատն դիւարնակ`
զՄաքքայ քակեն հիմն ի յատակ,
Չա'յն, որ յամէն բարեաց դատարկ,
յաստուածային ջրոյն ցամաք,
Յորում գդեսն որ հալածէր`
անդր առաքէր Տէրն համարձակ:
Չքարն գլեն զսււորակ,
ձգեն Կարմիր ծովուն յատակ,
Որպէս առիւծ` ընդ նապաստակ,
զհետմտեն նոցա երագ:
Կամ գերդ առիւծ գոչէ առակ,
փախչին էրէքն անհակառակ,
Այսպէս ջնջին նոքա իսպառ,
ի սուր սուսեր, ի տէգ նիզակ:
Եւ զայլսն առնեն փախստական,
վարեն մինչ յայնկոյս անքնակ,
Առնուն ծառայս եւ աղախնայս
զկանայս նոցա եւ զգաւակ:
Տիրեն ամէն երկրի ծագաց
եւ ընդհանուր կողմ աշխարհաց,
Քրիստոնէից հանուրց ազգաց
փրկիչ լինին յանօրինաց:
Յեկեղեցիսն խաւարած
յայնժամ վառի լոյս կանթեղաց:
Եւ որք ծառայք էին չարաց,
խառնին ի գունդս մեծատանց,
Գան ժողովին յամէն կողմանց,
ուր հալածեալ են եւ ցրուած:
Շինի աշխարհ քրիստոնէից,
յանչափ յանբաւ բարեաց լցած,

Լինի առատ պտուղ բազմաց
 սերմանց 'ւ ամէն պտղաբերաց:
 Մարդիկ ցնծան զուարճացած,
 յուտել, յըմպելն պարարած,
 Որք վայ ասեն վաղ մեռելոց,
 եղո՛ւկ կարդան գերեզմանաց,
 Թէ՛ Է՞ր չհասիք յաւուրս կենաց,
 յանգիւտ բարիս հասարակաց,
 Չոր պարգեւեաց Հայրն փառաց
 մեզ ի վերջին ժամանակաց:
 Յայնժամ որդիքդ իմ հեռացած,
 որք այժմ յինէն էք բաժանած,
 Գայք ի վերայ բարձեալ կառաց,
 պալարակապ երիվարաց,
 Որք ցրուեցայք յամէն կողմանց,
 չորեքծագեան տիեզերաց՝
 Ի գաւառաց հեթանոսաց
 եւ յաշխարհաց Պարսից, Թուրքաց:
 'Ի ես համբառնամ զաչս ի բարձանց,
 զձեզ տեսանեմ շուրջ ժողոված,
 Ընդ որ խնդամ եւ ցնծացած՝
 գիրկս արկանեմ եւ զուարճացած,
 Եւ զտիրական զգեստ մերկացած՝
 կարմիր կանաչ գոյն զգեցայց:
 Եւ զպատմունճանս պատառած
 փոփոխեցից նորոգ կարած,
 Ոչ յերկրաւորս ոստայնանկաց,
 այլ ի վերուստն փորանկած:
 Եւ զառագաստն իմ, նկարած
 յոսկիաթել պանունանաց,
 Դարձեալ պարգեւ պայծառացած
 ի հարսնարանն իմ զարդարած:
 Անդ, ի ներքոյ վարագուրաց,
 սուրբ քահանայք խորհրդագգած
 Աստուածայնոյ նուիրանաց
 զոլ պարգեւիչ պատարագաց:
 Ա՛նդ մակաղիք հօտք ոչխարաց,
 դասակք անմեղ եւ սուրբ գառանց:
 Ըմպէք զարիւն՝ պատճառ կենաց,
 ուտէք յերկնից զիջեալն հաց:
 Բնակիք ի վայրս դալարաց,
 սնանիք առ ջուրս հանգստաց
 Յանմահական սուրբ աղբերաց
 եւ ի յամպոցն երկնատեղաց:
 Յառաքելոց, մարգարէից,

ի սուրբ բանից վարդապետաց
Պարակցելով երկնաւորաց
ձայնիւ հնչէք ընդ հրեշտակաց
Չերեքսրբեանն Սրորէից,
Երրորդութեան երգս ի բարձանց:
Արդ, այսպիսի պայծառ փառաց,
ակնկալէք յուսով կենաց,
Չի փառք նախնին իմ տանարաց
քան զվերջինն լինի ցած,
Եւ սա անցեալ անդր ի բարձանց,
քան զառաջինն գերագանց:
Բայց այս խնդման բան աւետեաց
ոչ միայն իմն է խորանաց,
Այլ բոլորից բարեպաշտաց,
եկեղեցեաց հանրականաց,
Չոր ընթերցեալ ի Սուրբ Տառից
նախագուշակ տեսանողաց,
Տամ աւետիք տիեզերաց՝
յուսով սպասել այսր կենաց:
Եւ յառօրեայս չարչարանաց
տեւել, տոկալ տրտմականաց,
Չի չէ ամով այս լինելոց
ոչ առյապա կատարելոց,
Այլ փութապէս վճարելոց,
արագ արագ վախճանելոց.
Չի եկն եհաս աւուրց մերոց,
գոր ասացին ամաց թուոց,
Եւ ի տուեալ նշանս գրոց
տեսաք մտօք, թէ է գալոց:

13

Արդ, զայս տուաք բան սակաւուց
ձեզ միսիթար տրտմեցելոց՝
ՅԵրկրաւորաց, ո՛ր ոչ երկնայնոց,
յուսով սպասել, որ լինելոց:
Չի զայն հնար չէ ասելոց,
եւ ոչ մարդոյ բան խօսելոց,
Ո՛չ հողեղէն տեսեալ աչաց
եւ ո՛չ ունկամբ լուր լսելոց,
Ո՛չ է ի միտս անկեալ մարդոց,
գոր պատրաստեաց Տէր իւր սրբոց:
Որով թէ դուք համբերիցէք
չարչարանացդ հասելոց,
Չարքայութիւն Տեսոն ընտրելոց
էք ընդ նոսին ժառանգելոց,
Յորում տեղուոչ տեսանիցէք

զսիրելեաց անձինս ի լոյս:
Չորս այժմ ողբայք լալով անյոյս,
անդէն ցնծայք տեսլեամբ սրբոց,
Անդր ի դրախտն էք մտելոց,
ի միասին գուարճանալոց,
Ի հայրենին, գոր կորուսաք,
յանմահական կեանս երկնայնոց:

14

Յորոց հայցեմ յանդ լինելոց՝
եւ զիս յիշել՝ տարտամ ոգւոց
Չլոկ համանուն Մեծին Հայոց
զՆերսէս՝ բացեայ բարեաց գործոց,
Եւ շառաւիղ նորին ոստոց,
բայց ոչ նման գոլ արմատոց,
Չողբերգական բանիս գրող՝
առ ի սփոփանս տրտմեցելոց,
Քեզ եւ բոլոր մարդկան այլոց,
որք են ի սուգ վասն սոցունց:
Քանզի բանիւ զիրս եղելոց,
մեր ժամանակս դիպելոց,
Որով տուաք ոչ թէ գիտնոց,
այլ ախմարաց եւ տղայոց,
Չոր պահանջեաց տարփմամբ սիրոյ
եղբօրորդին իմ ըստ մարմնոյ՝
Մանուկ տղա գոլով տիոց
եւ կատարեալ յիմաստ գրոց,
Ներհմտացեալ յարիեստ զինուց,
ըստ հրահանգին Հռոմայեցւոց:
Գոլ աջողակ ի նուս ձիոց,
որպէս օրէն է վարժելոց:
Անուն նախնեաց յորջորջելոց
է Ապիրատ մակձայնելոց,
Չոր արարաք իրախճանելոց,
իբր գրօսանս հրճուելոց:
Արդ, առնկա՛լ բան դուզնաքեայ
եւ վերձանեա՛ ըստ իմաստնոց,
Ո՛չ առաւել եւ ո՛չ նուազ,
այլ ի յոտին բերեալ չափոց,
Յոր վայելեա սիրով սոցունց,
լրմամբ տառիս քո խնդրելոց,
Չոր աստանօր եմ յանգելոց՝
զգիրս բանիս վճարելոց,
Ի փառս Հօր աւարտելոց,
հոգւոյն ՚ւ Որդոյն կատարելոց:

վերջ